


**«Արմատրոյ»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն**

**ՀՀ Վայոց ձոր մարզի Ջերմուկ քաղաքի տարածքում գտնվող ընդլայնված
հուշարձան շենքի վերակառուցման**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՐԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

«Արմատրոյ» ԱՊԸ
տնօրեն՝

Ա. Առաքելյան



ԵՐԵՎԱՆ – 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	2
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	6
2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ	7
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ	11
3.1. Տարածքի աշխարհագրական դիրքը	11
3.2. Շրջանի կլիմայական պայմանները	15
3.3. Մթնոլորտային օդի որակի բնութագիր	19
3.4. Ջրային ռեսուրսներ	19
3.5. Հողային ռեսուրսներ	23
3.6. Կենսաբազմազանություն	24
3.6.1. <i>Բուսական աշխարհ</i>	24
3.6.2. <i>Կենդանական աշխարհ</i>	25
3.6.3. <i>Տարածաշրջանի վրանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ</i>	26
3.7. Աղմուկ և թրթռում	26
4. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	27
4.1. Մարզի ընդհանուր բնութագիրը	27
4.2. Ազդակիր համայնք	28
5. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ 29	
5.1. Քննարկվող տարբերակներ	30
6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 31	
6.1. Ընդհանուր տեղեկատվություն	31
6.2. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ	34
6.2.1. <i>Պատի և սյուների վերականգնում</i>	39
6.2.2. <i>Պատի եվ սյուների ամրապնդում</i>	40
6.2.3. <i>Քարե մակերեկոյթի ախտահանում</i>	41
6.2.4. <i>Քարե մակերևույթի պաշտպանություն</i>	41
6.2.5. <i>Գոյություն ունեցող ճեմուղու վերակառուցում</i>	41

7. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՋՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)	49
7.1 Նախապատրաստական աշխատանքների բնութագրերը	49
7.2 Շինարարական աշխատանքների բնութագրերը	49
7.3 Աշխատանքների անվտանգության կանոններ	51
7.4 Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	54
8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՃԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ	55
8.1 Ռիսկերի գնահատում	55
8.2 Օդի աղտոտում	55
8.3. Հողային ռեսուրսներ	58
8.4. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն	59
8.5. Աղմուկ և թրթռում	59
8.6. Թափոնների կառավարում	60
8.7. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն	61
9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	61
10. ՎՆԱՍԱԿԱՐ ԱՃԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱՋԵՑՄԱՆՆ ՌԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՌԻՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	63
10.1. Բնապահպանական միջոցառումների նկարագիրը	63
10.1.1. Մթնոլորտային օդ	63
10.1.2. Ջրային ռեսուրսներ	64
10.1.3. Հողային ռեսուրսներ	64
10.1.4. Աղմուկ և թրթռում	65
10.1.5. Կենսաբազմազանություն	66
10.1.6. Սոցիալական ազդեցության մեղմում	66
10.1.8. Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները	68
10.1.9. Աշխատանքի անվտանգություն և առողջություն	69
10.1.10. Փոխհատուցում	70
11. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱՋԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ	70
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	72
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ/ ՊԼԱՆ	77
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	80
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Նախագծման թույլտվություն	81

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ծրագիր	ՀՀ Վայոց ձոր մարզի Զերմուկ քաղաքի տարածքում գտնվող ըմպելասրահի հուշարձան շենքի վերառուցում
Ծրագրի նպատակը	ՀՀ Վայոց ձոր մարզի Զերմուկ քաղաքի տարածքում գտնվող ըմպելասրահի հուշարձան շենքի վերակառուցում ուժեղացումով և բարեկարգումով, և մասնակի վերականգնումով
Կառուցապատող	ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏՀՀ)
Ձեռնարկող	«Արմատրոյ» ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Ա. Մինասյան, 15
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Հեռ. 093 70 08 80 Տնօրեն՝ Ա. Առաքելյան
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	Հասցե՝ ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Զերմուկ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

«Արմատրոյ» ՍՊ ընկերությունը նախատեսում է իրականացնել ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի տարածքում գտնվող ըմպելասրահի հուշարձան շենքի վերականգնում և ըմպելասրահին կից այգում ճեմուղիների վերակառուցում:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացը (այսուհետ՝ ՇՄԱԳ) և ՇՄԱԳ հաշվետվությունը մշակված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (21.06.2014թ. ՀՕ-110-Ն) օրենքի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023), տեխնիկական առաջադրանքի պահանջներով (ՏԱ14, 11.03.2024թ.), ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն:

Վերը նշված ծրագրի իրականացման համար մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն): ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությունը սահմանվել և կազմվել է վերը նշված օրենքի պահանջներով՝ հաշվի առնելով նախագծային փաստաթղթով նախատեսված ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումները:

Հաշվետվությունը ներառում է ծրագրի բնապահպանական գնահատման հիմնական սկզբունքները և չափանիշները և ԲԿՊ իրականացման ընթացակարգերը՝ գործունեության իրականացման բոլոր փուլերում:

Հաշվետվության մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- ձեռնարկողի կողմից տրամադրված տեղեկատվությունը՝ աշխատանքային նախագիծ,
- կառուցապատվող տարածքի վերաբերյալ հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,

- տարածաշրջանի վերաբերյալ ելակետային տվյալների վերլուծությունները, քարտեզները,

- Ջերմուկ քաղաքի տարածքում գտնվող ընդլայնարահի հուշարձան շենքի վերականգնման և ընդլայնարահին կից այգում ճեմուղիների վերակառուցման գործունեության վերաբերյալ իրականացվել են շահագրգիռ կողմերի հետ բանակցություններ ու քննարկումներ:

- Ընդլայնարահի հուշարձան շենքի վերականգնման և ընդլայնարահին կից այգում ճեմուղիների վերակառուցման նպատակով իրականացվել են տեղագնման աշխատանքներ:

Գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- աշխատանքային նախագծի հիման վրա մշակվել է նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն,

- շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ անցկացվել են հանրային քննարկումներ,

- բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ, տեսաձայնագրություն) ներկայացում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Նախատեսվող գործունեության ձեռնարկող կազմակերպություն է հանդիսանում «Արմստրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Ընկերության հասցեն է՝ ՀՀ, Երևան, Նոր Արեշ, 8-րդ փողոց, 56:

Գործունեության նպատակն է Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի տարածքում գտնվող ընդլայնարահի հուշարձան շենքի, ինչպես նաև ընդլայնարահի շենքին կից ճեմուղու վերակառուցումն ու բարեկարգումը:

Սույն գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կազմված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

ՇՄԱԳ աշխատանքներում հաշվի են առնվել տեղանքի բնապահպանական և սոցիալական ելակետային տվյալները:

ՇՄԱԳ-ում դիտարկվել են այլընտրանքային տարբերակները, ներառյալ՝ գրոյական տարբերակը:

Գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնց վերլուծության արդյունքում մշակվել են բացասական ազդեցությունները կանխող կամ նվազեցնող միջոցառումներ:

Աշխատանքների պատշաճ և արդյունավետ կազմակերպման նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան: Մշակված միջոցառումների արդյունավետությունը վերահսկելու համար ներկայացվել է մշտադիտարկումների (մոնիթորինգի) ծրագիր:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

- օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,
- շինարարության փուլում ազդակիր համայնքի բնակչությանը /Ջերմուկ համայնքի Ջերմուկ բնակավայր/ պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,
- շինարարական մեքենաների և տեխնիկայի պատճառով տեղի երթևեկության ինտենսիվացում,
- հողերի և ջրային ռեսուրսների աղտոտում՝ շինարարական աշխատանքների ընթացքում:

2. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏ, ԲՆԱԳԱՎԱՌԻ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.)-12-րդ հոդվածը «Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը» սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման,

վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014, վերջին փոփոխությունը՝ 2023թ.) - կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմավարական էկոլոգիական գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, անդրսահմանային ազդեցության գնահատման, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության, հանրության ծանուցման, հանրային լուսմների իրականացման, պետական փորձաքննական եզրակացության տրամադրման, ուժը կորցնելու, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, փորձաքննության եւ նախատեսվող գործունեության իրականացման գործընթացներում նախաձեռնողների իրավունքների ու պարտականությունների հետ կապված հարաբերությունները:

Ներկայացվող գործունեությունն իրականացվելու է պատմամշակութային հուշարձանի տարածքում, համապատասխանաբար ըստ Օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի, այն դասվում է «Բ» կատեգորիայի շարքին:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) – կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողի օգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

ՀՀ Ջրային օրենսգիրք (04.06.2002թ.) – նպատակն է ազգային ջրային պաշարի պահպանությունն է, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ինչպես նաև սույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (24.11.2004 թ.) - կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (03.04.2000թ.) - սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (23.11.1999թ.) - սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» օրենք (11.11.1998թ.) – նպատակն է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի իրավական հիմքերի սահմանումը, այդ գործունեության ընթացքում ծագող հարաբերությունների կարգավորումը:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2000թ.) - կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

«ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» թիվ 1059-Ա ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի որոշում:

«ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի թիվ 781-Ն որոշում:

Բնապահպանական որակի սրանդարտներ, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար:

Գնահատման Հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է նաև հետևյալ որոշումներով՝

– ՀՀ կենդանիների մասին գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (N71-Ն, 29.01.2010թ.)

– ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (N72-Ն, 29.01.2010թ.)

– ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում (N967-Ն, 14.08.2008թ.)

– Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի 1404-Ն որոշում:

Ուղեցույցներ և սրանդարտներ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2019), որը պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է ՀՀ քաղաքաշինարարության կոմիտեի նախագահի ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» Շինարարական նորմերը հաստատելու մասին N03-Ն հրամանով (15 հունվարի 2024):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

ՀՀ տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

Շինարարության ընթացքում կպահպանվեն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի պահանջները:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1. Տարածքի աշխարհագրական դիրքը

Ջերմուկը Հայաստանի ամենահայտնի առողջարանային քաղաքներից է: Ջերմուկը գտնվում է ծովի մակերևույթից 2080 մ բարձրության վրա գտնվող ոչ մեծ սարահարթում, որը երկու մասի է բաժանվում Արփա գետի գեղատեսիլ կիրճով: Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արփա գետի կիրճի աջ ափին, Վարդենիսի լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջին: Տեղամասի ռելիեֆը բարձր լեռնային է, բարձր թեքությամբ՝ լանջի թեքությունը հասնում է մինչև 35°: Ռելիեֆի ծագումնային տիպը հրաբխային է:

Ջերմուկ առողջարանային քաղաքը գտնվում է մարզկենտրոն Եղեգնաձորից 50 կմ հյուսիս-արևելք, Արփա գետի ափունքի շրջանում: Հայաստանի երեք առողջարանային քաղաքներից մեկն է: Գտնվում է Երևանից 173 կմ հեռավորության վրա: Ջերմուկի տեղում նախկինում եղել է հայկական Ջերմուկ գյուղը: Ջերմուկ քաղաքը Երևան-Գորիս-Ստեփանակերտ մայրուղուց գտնվում է մոտ 24 կմ հեռավորության վրա:

Ջերմուկ համայնքը ընդգրկում է հետևյալ բնակավայրերը՝ Ջերմուկ քաղաք, Գնդեվազ, Կարմրաշեն, Կեչուտ և Հերիեր գյուղեր:

Համայնքի վարչական տարածքի մակերեսը կազմում է շուրջ 5,5 հազար հեկտար¹:



Նկար 1. Իրադրային սիսեմա

Ռելիեֆ


Տարածաշրջանը գտնվում է Արփա գետի վերին հոսանքի ավազանում: Հյուսիս-արևմուտքում բարձրանում է Թեքսարի լեռնաշղթան, արևմուտքում՝ Վայոց սար հանգած հրաբուխը (2581 մ), իսկ արևելքում և հարավում՝ տարածաշրջանը եզրավորվում է համապատասխանաբար՝ Ջանգեզուրի և Վայքի լեռնաշղթաներով: Թեքսարի լեռները սկսվում են Վարդենիսի լեռների Սանդուխտասար գագաթից և դեպի հարավ-արևմուտք

¹ <https://www.jermuk.am/Pages/CustomPage/?CustomPageID=722b890c-cc0b-4c5d-bdf2-30fbeb4291>


ձգվում է շուրջ 20կմ՝ մինչև Շատին գյուղը: Ամենաբարձր գագաթը Թեքսար լեռն է (2898 մ):

Ընդհանուր առմամբ տարածաշրջանին բնորոշ է լեռնային, խիստ կտրտված մակերևույթը, ռելիեֆի հրաբխային (կոներ, լեռնազանգվածներ, լավային հոսքեր, քարակարկաններ) ու սառցադաշտային (3000 մետրից բարձր) ձևերի, գոգահովիտների (Ջերմուկի, Արփայի, Գնիշիկի և այլն) գառիթափ անհամաչափ լանջերով լեռնաճյուղերի (Թեքսարի, Արտավանի, Գայլասարի, Գնիշիկի, Հարսնասարի և այլն), քարափների, նեղ ու երկար սարավանդների (Ջերմուկի, Աղավնաձորի, Գլաձորի, Գնդեվազի, Ելփինի և այլն) բարդ համակցությունը:

Առանձնահատուկ է նաև լեռնաճյուղերի անհամաչափությունը (հարավայինը՝ երկար, հյուսիսայինը՝ կարճ լանջերով) և ռելիեֆի խորը մասնատվածությունը (Եղեգիսի հովտում՝ մինչև 1300 մ):



Նկար 2. Ռելիեֆի ձևագրական տիպերը




Նկար 2. Մակերևույթի գերակշռող թեքություններ

Սեյսմիկ պայմանների բնութագիր

ՀՀ գտնվում է ակտիվ երկրաշարժային գոտում: Հյուսիսից հարավ առանձնացվում են հետևյալ սեյսմիկ զոնաները. Մերձքույան, Սոմխեթա-Ղարաբաղի, Մերձսևանյան, Կապան-Գոգորանի, Ծաղկունյաց-Ջանգեզուրի, Երևան-Օրդուբադի, Ուրծ-Վայքի: Հիմնականում նշված զոնաների սահմաններով է անցնում երկրկեղևի խորքային բեկվածքները, որոնցից ամենախոշորն են Սևան-Աբերաջի, Շիրակ-Ջանգեզուրի և Միջին Արաքսյան /Երևանյան/ բեկվածքները:

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի՝ 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04-«Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր»: Այդ նորմերով սահմանվում են այն չափանիշները, որոնք պետք է դրվեն շենքերի ու կառուցվածքների նախագծման ու կառուցման ընթացքում /սեյսմակայունության հիմնական սկզբունքներ/: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը ըստ սեյսմիկ գոտիների: Շրջանը գտնվում է սեյսմիկ անկայուն գոտում՝ A=03g ազատ անկման մեծությունով:

Նկար 3. ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վրանգի գոտիավորման քարտեզ



3.2. Շրջանի կլիմայական պայմանները

ՀՀ-ն գտնվում է մերձարևադարձային գոտու հյուսիսային լայնություններում և բնութագրվում է չոր ցամաքային կլիմայով ու կլիմայական հակադրություններով: ՀՀ կլիմայի վրա մեծ է հարակից տարածքների՝ Մեծ Կովկասի, Իրանական ու Փոքրասիական բարձրավանդակների, արաբական անապատների, Սև և Կասպից ծովերի ազդեցությունը: ՀՀ տարածքին բնորոշ է արևոտ կլիման:

ՀՀ-ում տարվա ընթացքում տիրապետում են մերձարևադարձային գոտուն բնորոշ արևմտյան օդային հոսանքները, որոնք լեռնային ռելիեֆի պայմաններում փոխում են իրենց բնույթը և պայմանավորում քամիների բազմազանությունն ու ռեժիմը: Ըստ բարձրության՝ մեծանում է քամու արագությունը:

Համաձայն Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքի էջի տարածաշրջանը գտնվում է ծովի մակարդակից միջին բարձրության վրա: Համայնքի ֆիզիկա-աշխարհագրական կոմպլեքսները ներկայացված են ցածրադիր և միջին բարձրության գոտիներում, որտեղ գերիշխում են կիսաանապատները և չոր տափաստանները: Կլիման գլխավորապես պայմանավորված է վերընթաց գոտիականությամբ, ըստ բարձրության՝ տաք, չոր ցամաքայինից մինչև ձյունամերձ: Ընդհանուր հաշվով, այս մարզի կլիմայական պայմանները աչքի են ընկնում չորությամբ և ցամաքայնությամբ, ինչպես նաև ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Ձյունածածկույթի

բարձրությունը Վայոց ձորի նախալեռներում լինում է 10-76 սմ, իսկ բարձրադիր շրջաններում՝ մինչև 2 մ:

Ջերմուկի շրջանի կլիման տիպիկ լեռնային է՝ զով ամառներով, ցուրտ, ձյունառատ, երկարատև ձմեռներով: Հուլիսյան միջին ջերմաստիճանը $16,3^{\circ}\text{C}$ է, առավելագույնը եղել է $+33,8^{\circ}\text{C}$, իսկ հունվարյան միջինը՝ $-7,2^{\circ}\text{C}$, նվազագույնը դիտվել է -30°C : Մթնոլորտային տեղումների քանակը տարվա ընթացքում կազմում է 400-800 մմ (առավելագույնը՝ գարնան վերջին, նվազագույնը՝ ամռան երկրորդ կեսին): 800 մմ:

Ընդհանուր առմամբ տարածաշրջանում ըստ բարձրության՝ հերթափոխվում են չոր, խիստ ցամաքային, չոր ցամաքային, չափավոր ցամաքային, բարեխառն և ցուրտ լեռնային կլիմաները: Ձնածածկույթով օրերի թիվը 40-150 է:

Աղյուսակներում բերված են Ջերմուկ քաղաքի կլիմայական պայմանները ըստ Ջերմուկի օդերևութաբանական կայանի տվյալների:

Աղյուսակ 3.1. Օդի միջին ջերմաստիճանը

Բնակավայրի անվանումը	Բարձ. ծովի մակեր. մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների. °C												Միջին տարեկան կտրվածքով	Բացարձակ նվազագույն. °C	Բացարձակ առավելագույն. °C
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Ջերմուկ	2064	-7.2	-6.0	-2.1	3.7	8.8	13,0	16,3	16,5	12.9	6.7	0.4	-4.7	4.9	-30,0	33,8

Աղյուսակ 3.2 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը,%														
	Ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա %	ամենաշոգ ամսվա, %
Ջերմուկ	74	73	72	71	70	68	66	63	63	69	77	75	70	64	49

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Ձնածածկույթ			
	Ըստ ամիսների												Տարեկան	Տասնօրյա առավելագույնը, սմ	Օրերի թիվը	Ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Ջերմուկ	65	68	85	103	97	69	43	26	27	64	57	67	771	212	146	399
	41	83	44	58	37	49	49	39	32	63	38	51	83			

Աղյուսակ 3.4. Քամու պարամետրերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների									Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (15մ/վ օրերի քանակը)	Հաշվարկային ռագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "ո" տարիների ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)	20					50	100	
											16					17	18	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
Ջերմուկ	793,1	Հունվար	4	6	19	34	26	6	2	3	69	0,8	1,6	12	21	23	25	
			2,0	2,3	2,2	2,2	1,7	2,1	2,0	2,1								
		Ապրիլ	5	5	17	30	24	9	4	6	49	1,5						
			2,0	2,2	2,5	2,8	2,5	2,6	2,5	2,2								
		Հուլիս	3	6	14	44	24	5	2	2	20	2,8						
			2,3	2,7	3,1	3,9	3,5	2,7	2,6	2,4								
		Հոկտեմբեր	2	4	13	27	32	15	4	3	56	1,2						
			1,6	2,3	2,4	2,6	2,5	2,8	2,9	1,8								

3.3. Մթնոլորտային օդի որակի բնութագիր

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից: ՊՈԱԿ-ը մշտական վերահսկողություն է կատարում 16 ստացիոնար դիտակայանների միջոցով, որոնցից 6 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ:

2022 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և գետնամերձ օզոնի պարունակությունները: Համաձայն իրականացված արդյունքների 2022 թվականին 2021 թվականի համեմատությամբ քաղաքների մթնոլորտային օդում հիմնականում բարձրացել է ազոտի երկօքսիդի պարունակությունը²:

Քանի որ Ջերմուկ քաղաքում կամ հարակից բնակավայրերի տարածքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ տեղադրված չեն և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան, ապա որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանի աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար ՊՈԱԿ-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-նուլեցույց³: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են:

Փոշի՝ 0.2 մգ/մ³;

Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³;

Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³;

Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

3.4. Ջրային ռեսուրսներ

Վայոց ձորի տարածքը մասնատված է բազմաթիվ գետակներով, գետերով, հովիտներով: Հիմնական զարկերակը Արփա գետն է, որը մարզի տարածքում հոսում է 92կմ, 2080մ քառ. ջրահավաք ավազանով: Արփան սկիզբ է առնում մարզի տարածքում

² <http://www.armmonitoring.am>

³ ՀՀ բնապահպանության նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ. «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» ուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

3260մ բարձրությունից, Սյունիքի բարձրավանդակի հյուսիս-արևմտյան լանջերից, թափվում է Արաքս գետը, Նախիջևանի տարածքում: Այն հարուստ է վտակներով, որոնք տեղ-տեղ առաջացնում են սահանքներ և ջրվեժներ, որոնցից են Ջերմուկի (Ջրահարսի ջրվեժը) և Հերիերի ջրվեժները: Ամենախոշոր վտակը Եղեգիսն է, որի հովիտը Վայոց ձորի գեղատեսիլ շրջաններից է, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքներից մեկը: Վայոց ձորի բոլոր գետերն ու գետակները սրընթաց են, արագահոս, ունեն մեծ անկում ու թեքություն և հարուստ են էներգետիկ պաշարներով: Արփայի ջրերի մի մասը Սևանա լիճ փոխադրելու նպատակով կառուցվել է 48կմ երկարությամբ Արփա-Սևան ստորգետնյա ջրատար թունելը, որը սկիզբ է առնում Կեչուտի ջրամբարից: Մարզում է գտնվում նաև Հերիերի ջրամբարը և էլի մի շարք փոքր լճեր և լճակներ, որոնք ունեն բնապահպանական և հանգստի գոտու նշանակություն:

ՀՀ կառավարության կողմից «Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերը սահմանելու մասին» որոշմամբ (ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N 75-Ն որոշում) ՀՀ-ում մակերևութային ջրերի որակի գնահատման համակարգը ջրի քիմիական որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս):

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Ջրային ռեսուրսների աղտոտվածությունը վերահսկվում է «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:


Ըստ ՊՈԱԿ-ի 2022 թվականի մակերևութային ջրերի որակի ամփոփագրի Արփա գետի ջրի որակը Ջերմուկ քաղաքից վերև, Վայք քաղաքից վերև և ներքև, Եղեգնաձոր քաղաքից վերև և Արենի գյուղից ներքև հաստվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս). Ջերմուկ քաղաքից վերև՝ պայմանավորված ամոնիում իոնով, երկաթով, կախութային չոր նյութերով, Վայք քաղաքից վերև՝ երկաթով և ալյումինով, Վայք քաղաքից ներքև՝ երկաթով, Եղեգնաձոր քաղաքից վերև՝ մոլիբդենով և երկաթով, Արենի գյուղից ներքև՝ պայմանավորված մոլիբդենով, երկաթով և բարիումով:

Հերիեր գետի ջրի որակը գետաբերանում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված մոլիբդենով⁴:

⁴ <http://www.armmonitoring.am>

Իրականացված մոնիթորինգի արդյունքների համաձայն Արփա գետի ջրի հիդրոկենսաբանական որակը Ջերմուկ քաղաքից վերև, Վայք քաղաքից ներքև և Եղեգնաձոր քաղաքից վերև հատվածներում գնահատվել է 1-ին դաս («գերազանց» որակ):

ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական




Նկար 4.

3.5. Հողային ռեսուրսներ

Հողը բնական գոյացություն է, կազմված ծագումնաբանորեն իրար հետ կապված հորիզոններից, որոնք ձևավորվել են երկրի կեղևի մակերեսային շերտերի վերափոխման հետևանքով՝ ջրի, օդի և կենդանի օրգանիզմների ներգործության շնորհիվ: Հողը երկրակեղևի մակերեսային փխրուն շերտն է, որը փոփոխվում է մթնոլորտի և օրգանիզմների ազդեցությամբ, լրացվում է օրգանական մնացուկներով: Հողառաջացնող գործաններն են աշխարհագրական, գեոմորֆոլոգիական, կլիմայական պայմանները, լանդշաֆտը, բուսական և կենդանական աշխարհի և մարդու ներգործությունը:

Ջերմուկի շրջանում զարգացած են լեռնամարգագետնային, մարգագետնատափաստանային, դարչնագույն անտառային հողերը և սևահողերը:

Լեռնամարգագետնային հողերը ունեն լավ արտահայտված նուրբ հատիկավոր ստրուկտուրա, աղքատ են կարբոնատներից: Պարունակում են մեծ քանակության հումուս (18-25, երբեմն 25-30%): Հողաշերտի հզորությունը փոքր է, կախված ռելիեֆի պայմաններից հզորությունը տատանվում է 15-20-ից 40-50սմ-ի սահմաններում:



- ① Լեռնամարգագետնային բույլ ճմային խորքային - հազեցած փոքր հզորության կավավազային բույլ և միջին հողմահարված
- ② Մարգագետնատափաստանային սևահողանման մնացորդային - հազեցած մեծամասամբ միջին հզորության կավավազային միջին հողմահարված
- ③ Մարգագետնատափաստանային սևահողանման մնացորդային - հազեցած փոքր հզորության կավավազային միջին հողմահարված
- ④ Մարգագետնատափաստանային տիպիկ մնացորդային մեծամասամբ միջին հզորության կավավազային
- ⑤ Մարգագետնատափաստանային տիպիկ քարքարոտ փոքր հզորության կավավազային միջին հողմահարված
- ⑥ Դարչնագույն անտառային լվացված կավայնացված հզոր
- ⑦ Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված միջին հզորության կավային բույլ հողմահարված
- ⑧ Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված միջին հզորության կավավազային բույլ հողմահարված
- ⑨ Դարչնագույն անտառային լվացված մեծամասամբ միջին հզորության կավային մշակովի
- ⑩ Դարչնագույն անտառային կարբոնատային քարքարոտ փոքր հզորության կավավազային
- ⑪ Դարչնագույն անտառային կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավավազային միջին և ուժեղ հողմահարված

Նկար 5. Հողերի բնական տիպերի քարտեզ

Անմիջապես աշխատանքների տեղամասերում բերրի հողաշերտը այն տատանվում է մոտավորապես՝ 10- 25 սմ:

Ըստ նախնական հաշվարկների հանվող բերրի հողի ծավալը կկազմի մոտավորապես 27 մ³, որն ամբողջությամբ օգտագործվելու է ազատ տարածքների բարեկարգման համար:

3.6. Կենսաբազմազանություն

Վայոց ձորի մարզի հողաբուսային ծածկույթն ու կենդանական աշխարհը բազմազան են և գլխավորապես պայմանավորված են վերընթաց լանդշաֆտային գոտիականությամբ: Այսպիսով, մարզի տարածաշրջանները աչքի են ընկնում կենսաբազմազանության տարբեր տեղաբաշխվածություններում:

Վայոց ձորի մարզի բուսական աշխարհի տեսակային կազմը հարուստ է: Այստեղ հաշվվում է գրեթե 1650 բուսատեսակ, որոնցից 1500 տեսակը խոտաբույսեր են, որոնց մեջ գերակշռում են դեղաբույսերը: Մարզն աղքատ է անտառներով (տարածքի 1.6% կամ 3700հա): Սակայն անտառի կազմի մեջ մտնող 150 ծառատեսակները մեծամասամբ արժեքավոր են՝ հազվագյուտ ու էնդեմիկ տեսակներ են: Դրանց մեջ կան հատուկ պահպանվող տարածքներ՝ Հերիերի գիհու նոսրանտառային և Ջերմուկի անտառային արգելավայրերը: Բնական պայմանների բազմազանությամբ է պայմանավորված նաև հարուստ կենդանական աշխարհի գոյությունը: ՀՀ –ում գրանցված 460 տեսակի կենդանիներից 225-ը հանդիպում են Վայոց ձորի մարզում: Դրանցից են բեզդարյան այծը, վայրի ոչխարը՝ (մուֆլոնը), վայրի խոզը, գորշ արջը, աղվեսը, գայլը, նապաստակը, թռչուններից՝ լորը, քարակաքավը, անգղերը, արծիվները, ձկնատեսակներից՝ կարմրախայտը, բեղուն, կողակը: Հաճախակի հանդիպում են նաև թունավոր օձեր՝ հայկական իժ, գյուրգա:

Ինչպես բույսերի, այնպես էլ կենդանիների շատ տեսակներ գրանցված են «Կարմիր գրքում»: Կենդանիների պահպանման նպատակով ստեղծվել են արգելավայրեր: Վայոց ձորի մարզում աճում են ծիրանի, բալի, տանձի, դեղձի, խնձորի, խաղողի, սալորի, սերկևիլի, փշատի, ընկույզի բազմաթիվ տեսակներ, բազմաթիվ հատապտուղներ:

3.6.1. Բուսական աշխարհ

Տարածաշրջանի բուսական ծածկը ներկայացված է Վայոց Ձորի մարզին բնորոշ փետրախոտային տափաստանային բուսականությամբ: Այստեղ գերիշխում են փետրախոտերը (*Stipatirsa*, *S. cap illata*), *Thmus kotschyanus*, *Tanacetumchiliop hyllum*:

Տարածված են նաև *Festuca valesiaca* Gaudin, *Koelera albovii* Domin., *Koelera acric stata* (L. Pers.), *E lytrigia t richophor* տեսակները:

Տարածաշրջանում հայտնի բուսատեսակներից 55-ը (ֆլորայի մոտ 6.1%-ը) գրանցված են 2010թ. ՀՀ Բույսերի Կարմիր գրքում, որոնք բաժանվում են հետևյալ կատեգորիաների՝ Կրիտիկական վիճակում գտնվող (CR)՝ 11 տեսակ: Դրանք են՝ Սոխ անհարթացողուն *Allium scabriscapum*, Սոխ թալիշյան *Allium talyschense*, Տերեփուկ Թամանյանի *Rhaponticoides tamaniana*, Ստեպտորամֆուս Չերեպանովի *Steptorhamphus czerepanovii*, Սոնալրջուն սրապտուղ *Sameraria cardiocarpa*, Սոնալրջուն լրջունատերև *Sameraria glastifolia*, Բոշխ կիլիկիական *Carex cilicica*, Գազ Ախունդովի *Astragalus achundovii*, Սզնի Շովիցի *Crataegus szovitsii*, Ստելերոպսիս Մաղաքյանի *Stelleropsis magakjanii* և Խթանաբույս երկարածաղիկ *Centranthus longiflorus*:

Դեղաբույսերից տարածված են. Խնկածաղիկ սովորական, օշինդր դառը, եղեսպակ, թանթրվենի, շրեշ և ուրիշ տեսակներ:

Տարածաշրջանում հանդիպում են նաև 46 տեսակի էնդեմներ, որից 16 տեսակ Հայաստանի էնդեմներ, 20 տեսակ Հարավային Անդրկովկասի էնդեմներ, 6 տեսակ Անդրկովկասի էնդեմներ և 4 տեսակ Կովկասի էնդեմներ:

Անմիջապես ներկայացվող տարածքում նշված բուսատեսակներից որևի մեկի վերաբերյալ գրականության մեջ տվյալներ չկան: Բացի դա տարածքում առկա է մարդկային գործոն, ըմպելասրահ հուշարձանը համարվում է զբոսաշրջության կենտրոն, ինչի պարագայում կարմիր գրքյան բուսատեսակներ չեն կարող լինել:

3.6.2. Կենդանական աշխարհ

Տարածաշրջանի կենդանական աշխարհը չափազանց բազմազան է: Շրջանում հանդիպում են ողնաշարավոր կենդանիների ավելի քան 220 տեսակ: Կան բեզոարյան այծ, հայկական վայրի ոչխար, գորշ արջ, լուսան, գայլ, աղվես, կզաքիս, անտառային կատու, քարակաքավ, բազմաթիվ ճնճղուկազգիներ, ձկներից՝ կարմրախայտ, կողակ: Թռչուններից հանդիպում են բազմաթիվ ճնճղուկազգիներ, որոնցից են արտույտների, սերինոսների, դրախտապանների տարբեր տեսակները:

Տարածաշրջանում ողնաշարավոր կենդանիներից դիտարկվել են նապաստակ, աղվես, սովորական դաշտամուկ, մոխրագույն առնետ:

Արձանագրվել են գայլի կենսագործունեության հետքեր: Նկատվել է դաշտային արտույտներ, բայց տեղամասի սահմաններում բներ չեն գտնվել:

Պետք է նշել, որ նախատեսվող գործունեության տարածքում վայրի կենդանիներ կամ դրանց ապրելավայրեր չեն հայտնաբերվել:

3.6.3. Տարածաշրջանի վրանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Ներկայացվող շրջանում են գտնվում «Ջերմուկ ջրաբանական» և «Հերիերի նոսրանտառային», «Ջերմուկի անտառային» պետական արգելավայրերը:

«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ.-ի սեպտեմբերի 17-ի թիվ 1063-Ն որոշմամբ՝ Արփա գետի վերին հոսանքի (ծովի մակարդակից 2250-2750 մ բարձրության վրա) ջրհավաք ավազանի տարածքի բնական էկոհամակարգերի, այդ թվում՝ կենսաբազմազանության, բնության եզակի հուշարձանների և հանքային ջրերի տաք աղբյուրների սնման ավազանների պահպանության նպատակով: Այն գտնվում է Վայոց ձոր մարզի Արփա գետի վերին հոսանքի ջրհավաք ավազանի տարածքի սահմաններում:

«Հերիերի նոսրանտառային» պետական արգելավայրը հիմնվել է 1958 թ.-ին Արփա գետի աջափնյա վտակ Հերիեր գետի ավազանում՝ ծովի մակարդակից 1400-2000 մ բարձրության վրա գիհու ռելիեֆային նոսրանտառների պահպանության նպատակով:

Ջերմուկի անտառային արգելավայր, բնության հատուկ պահպանվող տարածք է և Հայաստանի Հանրապետության 27 արգելավայրերից մեկը: Գտնվում է Վայոց ձոր մարզում՝ Արփա գետի վերին ավազանում՝ ծովի մակարդակից 2000-2500 մ բարձրություններում խոշորառէջ կաղնու լեռնային անտառների և հազվագյուտ կենդանիների (բեզուարյան այծ, գորշ արջ) պահպանության նպատակով: Արգելավայրը ստեղծվել է 1958թ.-ին ՀՍՍՀ Մինիստրների սովետի սեպտեմբերի 13-ի Ա Պ-341 որոշմամբ: Անտառային արգելավայրը զբաղեցնում է 3865.0 հա մակերես, այդ թվում՝ 1914.4 հա տափաստանային և 1950.6 հա անտառային: Նշված ԲՀՊՏ-ները գտնվում են գործունեության տարածքից 4 – 9 կմ հեռավորության վրա:

Ըստ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-Ն որոշման ցանկի մոտակա բնության հուշարձանը՝ «Ջերմուկ» («Յուլք») ջրվեժն է, որը գտնվում է ըմպելասարահից 485 մ հեռավորության վրա ուղիղ գծով:

3.7. Աղմուկ և թրթռում

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդմ բերված են աղյուսակ 5.7.1-ում:

Աղյուսակ 3.7.1 «Սահմանված աղմուկի նորմերը աղմուկի առավելագույն թույլատրելի մակարդակը»

Ընկալիչ	Ժամերը	dBL _{AEO}	dBL _{AMAX}
Բնակելի և հասարակական շենքերի մոտ	06:00-22:00	55	70
	22:00-06:00	45	60

Աղյուսակ 3.7.2 Լարվածության եվ ծանրության փարբեր կարեգորհաների աշխատանքային գործունեության աշխատատեղերում ձայնի սահմանային թույլատրելի մակարդակները եվ ձայնի սահմանային մակարդակները դԲա-ով

Աշխատանքային գործընթացի լարվածության կարգ	Աշխատանքային գործընթացի ծանրության կարգ				
	թեթև ֆիզիկական ծանրաբեռնվածություն	միջին ֆիզիկական ծանրաբեռնվածություն	1 աստիճանի ծանր աշխատանքի	2 աստիճանի ծանր աշխատանքի	3 աստիճանի ծանր աշխատանքի
Թեթև աստիճանի լարվածություն	80	80	75	75	75
Միջին աստիճանի լարվածություն	70	70	65	65	65
Աշխատանքի 1 աստիճանի լարվածություն	60	60			
Աշխատանքի 2 աստիճանի լարվածություն	50	50			

Ներկայացվող տարածքում աղմուկի և տատանումների աղբյուր կարող են հանդիսանալ ավտոտրանսպորտային միջոցները, շինարարական աշխատանքները, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ: Գործնականում աղմուկի աղբյուրները մարդածին են՝ բնորոշ քաղաքային միջավայրին:

4. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1. Մարզի ընդհանուր բնութագիրը

Վայոց ձորի մարզը գտնվում է հանրապետության հարավային հատվածում: Մարզը պետական սահմանով արևելքից և արևմուտքից սահմանակից է Ադրբեջանին: Հյուսիսից՝ Գեղարքունիքի մարզին, հարավից՝ Սյունիքի մարզին, իսկ հյուսիսարևմուտքից՝ Արարատի մարզին:

Վայոց ձորի մարզը շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք յուրահատուկ բնական պատնեշներ հանդիսանալով նրա և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն: Վայոց ձորի մարզը «

ամենանոսր բնակչություն ունեցող մարզն է: Այն առանձնանում է նաև գյուղական նոսր բնակչությամբ:

2022թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 1.1 %,
- գյուղատնտեսություն 2.3 %,
- շինարարություն 2.4 %,
- մանրածախ առևտուր 0.7 %,
- ծառայություններ 0.6 %:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած է «Ջերմուկ» հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի): Մարզով է անցնում Հայաստանի Հանրապետությունն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում:

4.2. Ազդակիր համայնք

Ներկայացվող գործունեության ազդակիր է հանդիսանում ՀՀ Վայոց ձոր մարզի Ջերմուկ համայնքը:

Ջերմուկ համայնքը ընդգրկում է հետևյալ բնակավայրերը՝ Ջերմուկ քաղաք, Գնդեվազ, Կարմրաշեն, Կեչուտ և Հերիեր գյուղեր: Ջերմուկ համայնքը գտնվում է Վայոց ձորի մարզի արևելյան մասում:

Մակերես՝ 496.72կմ²

Համայնքի կենտրոն՝ Ջերմուկ քաղաք

Համայնքի բնակչության թիվը կազմում է 9372 մարդ, այդ թվում տղամարդիկ՝ 4603 և կանայք՝ 4769:

Բնակչության տարիքային և սոցիալական կազմն այսպիսին է՝

- 0-6 տարեկան -409 մարդ
- 7-17 տարեկան –787 մարդ
- 18-63 տարեկան – 6158 մարդ
- 64 և ավելի տարեկան – 1618 մարդ

- կենսաթոշակառուների թիվը – 1731, այդ թվում տարիքային և աշխատանքային թոշակառուներ՝ 1640 մարդ
- հաշմանդամներ - 266մարդ, այդ թվում մանկուց հաշմանդամներ՝ 23մարդ
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 75մարդ
- աշխատունակներ – 5992 մարդ
- զբաղվածներ – 3675 մարդ
- գործազուրկներ – 368 մարդ, այդ թվում գրանցված՝ 181 մարդ, չգրանցված՝ 187 մարդ
- տնային տնտեսությունների թիվը – 2991
- ընտանիքների թիվը - 2424
- ընտանեկան նպաստի պետական համակարգում հաշվառված ընտանիքների թիվը – 363, այդ թվում նպաստառու ընտանիքների թիվը՝ 255:

Ջերմուկ բնակավայր

Բնակավայրը (2023թ. տարեսկզբին՝ 3.9 հազ. բնակիչ)⁵ գտնվում է ծովի մակերևույթից 2080մ բարձրության վրա գտնվող ոչ մեծ սարահարթում, որը երկու մասի է բաժանվում Արփա գետի գեղատեսիլ կիրճով: Քաղաքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավ-արևելյան մասում, Վայոց ձորի մարզում, (պատմական Սյունիք նահանգի Վայոց ձորի գավառի տարածքում), մարզկենտրոնից 50կմ հյուսիս-արևելք, մայրաքաղաք Երևանից 173 կմ հեռավորության վրա:

Վարչական տարածքը՝ շուրջ 5.5 հազար հեկտար է: Երևանի հետ կապվում է երկու ավտոմայրուղիներով, որոնցից Ջերմուկ-Երասխ-Երևան մայրուղին ավելի կարճ է և կազմում է շուրջ 170 կմ: Քաղաքը Երևան-Գորիս-Ստեփանակերտ մայրուղուց գտնվում է 24կմ հեռավորության վրա:

Քաղաքը շրջափակված է 2500-3000 մետր բարձրության հասնող լեռնաշղթաներով: Շրջապատն անտառապատ է: Անտառների մի մասը տնկել են 1980-1990-ական թվականներին:

5. ՆԱԽԱԳԾԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ նշված գործունեությունը չի իրականացվում, որևէ փոփոխություն չըջակա միջավայրում տեղի չի ունենում: Այս դեպքում՝

- բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնաժին ներգործություն և ճնշում չի առաջանա:

⁵ https://www.armstat.am/file/Map/MARZ_10.pdf

Մյուս կողմից, զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.

- նախագծի իրականացման արդյունքում զբոսաշրջիկների նոր հոսքի և ընդհանուր Ջերմուկ համայնքում զբոսաշրջության զարգացմանը հնարավորությունները, ինչպես նաև դրա հետևանքով տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորությունները,
- նախագծի իրականացման ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորությունները
- հուշարձան շենքի արտաքին տեսքի պահպանում և փոխանցում հետագա սերունդներին:

5.1. Քննարկվող տարբերակներ

Քանի որ նախատեսվող գործունեության նպատակն է եղել ըմպելասրահի հուշարձան շենքի վերակառուցումն ու բարեկարգումը, որպես տարբերակներ դիտարկվել են այդ գործունեությունը կազմակերպելու ստորև ներկայացված 2 տարբերակները.

Ա. Իրականացնել հուշարձան շենքի միայն արտաքին տեսքի՝ պատերի վերականգնում.

Այս տարբերակի առավելություններն են.

- շինարարական աշխատանքների ծավալները և համապատասխանաբար ֆինանսական ներդրումների ծավալները կլինեն ավելի փոքր,
- վերականգնման աշխատանքները տևողությունը կլինի կարճաժամկետ և առանց շրջակա միջավայրի վրա էական ազդեցության:

Տարբերակի թերությունները.

- Լիարժեքորեն չի իրականացվի վերակառուցման աշխատանքները և չի ապահովվի հուշարձան շենքի երկարակետությունը:

Բ. Իրականացնել ըմպելասրահի հուշարձան շենքի վերականգնում՝ հենապատի կառուցմամբ և ըմպելասրահին կից այգում ճեմուղիների վերակառուցում.

Այս տարբերակի թերություններն են.

- ծախսերի ավելի բարձր մակարդակ
- շինարարական աշխատանքների ավելի երկար տևողություն
- մի քանի ծառերի հատում:

Այս տարբերակի առավելությունը հուշարձան շենքի լիարժեք վերականգնում և երկարակետության ապահովում:

Վերլուծելով ներկայացված տարբերակները ընտրվել է երկրորդ տարբերակը:

6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

6.1. Ընդհանուր տեղեկատվություն

Սույն Հաշվետվության մեջ ներկայացված՝ նախատեսվող գործունեության ձեռնարկող կազմակերպություն է հանդիսանում «Արմատրոյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Ընկերության հասցեն է՝ ՀՀ, Երևան, Նոր Արեշ, 8-րդ փողոց, 56:

Նախատեսվող գործունեությունն է՝ իրականացնել Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի տարածքում տարածքում գտնվող ըմպելասարահի հուշարձան շենքի վերականգնման և ըմպելասարահի շենքին կից ճեմուղու վերակառուցման աշխատանքներ:

Հուշարձան շենքի մասնակի վերականգնման և վերանորոգման նախագիծը մշակվել է ՀՀ-ում գործող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման և վերականգնման բնագավառին, ինչպես նաև քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառներին վերաբերող իրավական փաստաթղթերին համապատասխան:

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի ըմպելասարահի շենքի և նրա կոնստրուկցիաների, ինչպես նաև ըմպելասարահին կից ճեմուղու տեխնիկական վիճակի հետազոտությունը կատարվել է Հայաստանի տարածաքային զարգացման հիմնադրամի հետ 10.12.2021թ. կնքված պայմանագրի հիման վրա:

Ըմպելասարահի նկարագրությունը

Պետք է նշել, որ Ջերմուկ քաղաքի սիրտը հանդիսանում է ըմպելասարահի շինությունը, որի մեջ են գտնվում տարբեր ջերմաստիճանի 5 հանքային աղբյուրներ: Ջերմուկում գտնվող զբոսաշրջիկները օրական 3 անգամ, սնվելուց 20-30 րոպե առաջ, բժիշկների ցուցումով խմում են հանքային ջուրը, որի շնորհիվ կարգավորվում է մարսողությունը և այդ պատճառով Ջերմուկում գտնվող բոլոր զբոսաշրջիկները օրվա ընթացքում 3 անգամ պարտադիր այցելում են ըմպելասարահ:

ՀՀ կառավարության 17 հունիսի 2003 թվականի թիվ 754-Ն որոշման համաձայն ճարտարապետ Գ. Թամանյանի նախագծով 1966 թվականին կառուցված ըմպելասարահը ընդգրկվել է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում:

Ըմպելասարահի շենքը կառուցված է որպես բաց սյունազարդ սրահ: Ըստ նախագծման թույլտվության շինության մակերեսը կազմում է 395.2 ք.մ.:

Շենքի հիմնական կրող կոնստրուկցիաները հանդիսանում են թիկունքային հատվածի երկայնական քարե շարվածքով պատը 55-60 սմ հաստությամբ և սրահի սյուների երկաթբետոնյա նեռուկները, որոնք երեսապատված են ֆելզիտե քարերով, և ունեն

շրջանաձև կտրվածքի մասեր: Սյուների տրամագիծը 47.5սմ է, իսկ քարերի բարձրությունը 40սմ:

Սրահի ծածկը իրականացված է միաձույլ երկաթբետոնյա կոնստրուկցիաներից հարթ ու կամարաձև տեսքով և ֆելգիտե քարերից իրականացված երկու ուղղությամբ անցնող կամարներից:

Ներկայումս սրահի ծածկի վրա իրականացված է մետաղական հարթ թիթեղներից տանիք, որի հիդրոմեկուսիչ շերտը ամրացված է փայտյա կոնստրուկցիաներին:

Շենքի կողային ճակատներում իրականացված է բարդ պարագծով սյուներ, որոնց միջակայքում մոնտաժված են մետաղական գեղարվեստական ձևավորումով պատուհաններ-ճաղավանդակներ:

Ընկերության հատակը գտնվում է, պայմանականորեն փողոցի նիշը 0-ական ընդունելու դեպքում, 3.55 մ բարձրության վրա:

Փողոցից ընկերության մոտեցումն իրականացվում է միջանկյալ հարթակի միջոցով, որը գտնվում է փողոցից 2,5մ բարձրության վրա, իսկ այդ նիշից 0,9մ բարձրության վրա գտնվում է ընկերության հատակի նիշը:

Լայնական ուղղությամբ պայմանականորեն 1-16 համարակալված սյուների առանցքներից 1-4 և 13-16 առանցքներում երկայնական ուղղությամբ ունեն լրացուցիչ տեղակայված սյուներ, որոնցով սրահի երկու կողմերում առաջացնում են ելուստներ 4մ լայնությամբ:

Վերը նշված առանցքների սահմաններում նույնպես լրացուցիչ սյուների տեղադրմամբ կառուցվել են երկու աշտարակային կառույցներ, որոնք ունեն հատակի նիշից 10,76մ բարձրություն:

Նշված աշտարակային կառույցները սրահի ծածկից վեր ունեն 20 սյուների վրա կառուցված գմբեթներ, որտեղ սյուների վրա իրականացված են միաձույլ երկաթբետոնյա ծածկեր:

Ընկերության շենքի թիկունքային պատին կից մոտ 1մ հեռավորության վրա իրականացված է կցակառույց, որի արտաքին պատը շարված է տարբեր ամրության (կրաքար, բազալտ և այլն) քարերից և ունի 2,2մ բարձրություն ու սվաղված է ցեմենտ ավազե շաղախով:

Կցակառույցը երեք պատերով շինություն է, ունի թեք ծածակ, որի մետաղական հիդրոմեկուսիչ շերտը ամրացված է փայտյա ծալեղնաուղքերի վրա, որոնք մի ծայրով ամրացված են կցակառույցի երկայնական պատին, իսկ մյուս ծայրով հենվում են

ընկերության եզրային կրող պատի արտաքին մակերեսի վրա սրահի քվիլից 1-1,5մ ցածր նիշի վրա:

Նախատեսվում է նաև շենքի ետնամասում, կցակառուցից մոտ 1,8 մ հեռավորության վրա, կառուցել հենապատ և ջրահեռացման ուղիներ՝ շենքը մեկուսացնելով ետևի թեք լանջից թափվով ջրային հոսքերից:

Ընկերության աջակողմյան հատվածում գտնվող միջանկյալ հարթակի ստորին հատվածում հենապատի ետևում գտնվում է հասարակական սանհանգույցը, որի մուտքը փողոցի նիշից է:

Ճեմուղու նկարագրությունը

Ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ ճեմուղիները բետոնե քայքայված պատվածքից են և գտնվում են շատ վատ վիճակում (Նկար3. և Նկար4.): Վերակառուցման ընթացքում նախատեսվում է գոյություն ունեցող բետոնե քայքայված պատվածքի քանդում ձեռքով ամբողջությամբ և նոր ճեմուղու կառուցում:

Բետոնե շարվածքով ճեմուղին անտառի միջով բարձրանում է մինչև քարայծի արձանը, որը տեղադրված է ժայռի վրա:

Նախագծով նախատեսվում է 2 ճեմուղու վերակառուցում՝ N1 (35 մ) և N2 (265 մ): N1 ճեմուղին գտնվում է ճանապարհին կից այգու մեջ: Գոյություն ունեցող ե/բետոնե բլոկները նախատեսվում է ապամոնտաժել և կառուցել նոր բետոնե հիմքով և բրեկրա տեսակի ծածկով նոր ճեմուղի:

Բետոնե ճեմուղու եզրերը նախատեսվում է իրականացնել բազալտե 10x20սմ թաղված եզրաքարերով: Ճեմուղի N1-ը հասնում է աստիճանավանդակներին, որոնք նախագծով նախատեսվում է վերանորոգել և իրականացնել բազալտե երեսապատում:

Աստիճանավանդակներով բարձրանում են բետոնե հարթակ, որի վրայով այժմ անցնում է բաց կիսախողովակ, որի միջով անցնում է բնական աղբյուրի ջուրը՝ վերջնամասում վերածվելով ջրվեժի: Հարթակը ամբողջությամբ Քանդված է: Նախատեսվում է հարթակի քանդում և նոր հարթակի կառուցում: Հարթակի ձախ կողմում նախատեսվում է ստորին հենապատերի կառուցում՝ բազալտե թասակներով:

N2 ճեմուղին սկսվում է հարթակի սզբից և շարունակվում է մինչև քարայծի արձանը: Ճեմուղու հիմնական լայնությունը 1,6մ է:

Ճեմուղու եզրերը նախատեսվում է իրականացնել բազալտե 10x20սմ թաղված եզրաքարերով: Մեծ թեքությամբ տեղամասերում նախատեսվում է աստիճանների իրականացում: Անվտանգության ապահովման նպատակով որոշ հատվածներում

նախատեսվում է մետաղական բազրիքի տեղադրում համապատասխան բետոնե հիմքով: Ճեմուղու երկայնքով նախատեսվում է նստարանների և աղբամանների տեղադրում: Ճեմուղու վերջում նախատեսվում է փոքր հարթակի կառուցում: Մեծ թեքությամբ շեպերի ամրության ապահովման նպատակով որոշ հատվածներում նախատեսվում է գաբիոնային շարվածքով հենապատերի կառուցում (Նկար 5.):

6.2. **Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ**

Նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

Ըմպելասարահ

- ✓ Ըմպելասարահի կառույցի վերակառուցում՝ ուժեղացումով և բարեկարգումով,
- ✓ Ջրամատակարարման- ջրահեռացման և կոյուղու համակարգերի վերականգնում,
- ✓ Կառույցի արտաքին լուսավորության համակարգի ստեղծում,
- ✓ Ըմպելասարահի հարթակի վերականգնում,
- ✓ Սանիտարական հանգույցի վերակառուցում,
- ✓ Ըմպելասարահի, հարակից հարթակի և երիզող հենապատերի վերակառուցում և ամրացման աշխատանքներ,
- ✓ Հաշմանդամություն ունեցող անձանց համար վերելակի տեղադրում մինչև ըմպելասարահի հարթակ, այնուհետև թեքհարթակի կառուցում՝ մինչև հանքային ջրերի սրահ,
- ✓ Ըմպելասարահի ետնամասի կցակառույցի վերակառուցման աշխատանքներ,
- ✓ Ըմպելասարահի ետնամասում հենապատի և ջրահեռացման ուղիների կառուցում:

Ճեմուղի

- ✓ Գոյություն ունեցող ճեմուղու քայքայված բետոնե շարվածքի քանդում ձեռքով և նոր ճեմուղու կառուցում:
- ✓ Ճեմուղու եզրերում բազալտե 10x20սմ թաղված եզրաքարերի տեղադրում:
- ✓ Մեծ թեքությամբ տեղամասերում աստիճանների կառուցում:
- ✓ Անվտանգության ապահովման նպատակով որոշ հատվածներում մետաղական բազրիքի տեղադրում՝ համապատասխան բետոնե հիմքով:
- ✓ Ճեմուղու մեծ թեքությամբ շեպերի ամրության ապահովման նպատակով որոշ հատվածներում գաբիոնային շարվածքով հենապատերի կառուցում:
- ✓ Ճեմուղու վերջում փոքր հարթակի կառուցում:
- ✓ Ճեմուղու երկայնքով նստարանների և աղբամանների տեղադրում:
- ✓ Ճեմուղու ողջ երկայնքով արտաքին լուսավորության իրականացում՝ 21 հատ հենաայունների տեղադրումով:

Ինչպես նշվել է ընկերության շենքը իրենից ներկայացնում է բաց սյունազարդ սրահ՝ 395.2 քմ մակերեսով:

Ընկերության սյուները, պատերը, քիվերը և զարդաքանդակները երեսապատված են ֆելզիտե բարերով, որոնցում առկա են վնասված հատվածներ ինչպես նաև բացակայող հատվածներ:

Ճակատների քիվերում և կամարները երիզող պրոֆիլավոր բարերում, սյուներում առկա են հատվածներ, որոնք սվաղվել և համահարթեցվել են ցեմենտ ավազային շաղախով:

Նախատեսվում է նման հատվածները մաքրել ցեմենտ ավազային շերտից և վերականգնել ֆելզիտե երեսապատումը:


Ինչպես նաև զարդաքանդակների բացակայող հատվածները լրացնելնով տաշվող բարերով:

Թուլացած բարերի հատվածներում իրականացնել քանդում վերաշարում, իսկ որոշ հատվածներում իրականացնել ներարկման աշխատանքներ:

Ընկերության աջակողմյան հատվածում գտնվող միջանկյալ հարթակը և հենապատը երեսապատված են բազալտե քարերով, հենապատը ունի զգալի դեֆորմացիաներ, որը և առաջարկվում է քանդել և վերաշարել: Իրականացնել սանհանգույցների և պահեստասենյակի տանիքի հիդրոմեկուսացում, անհրաժեշտության դեպքում իրականացնել լրացուցիչ ե/բ պաշտպանիչ շերտ:

Նախագծով նախատեսվում է նաև փոխարինել ընկերության տանիքը՝ նոր ջրամեկուսիչ նյութերով:

Շենքի ետնամասում գտնվող կցակառույցը գտնվում է անմխիթար վիճակում և չի համապատասխանում կոնստրուկտիվ պահանջներին: Նախատեսվում է կցակառույցը հիմնովին վերակառուցել:




Նկար 6. Նախատեսվող կցակառույցի նկարագիրը

Նախատեսվում է նաև շենքի ետնամասում կառուցել հենապատ և ջրահեռացման ուղիներ՝ շենքը մեկուսացնելով ետևի թեք լանջից թափվով ջրային հոսքերից: Հենապատը լինելու է 1.2 մ բարձրությամբ և 50.5 մ երկարությամբ, իսկ ջրահեռացման ուղիները կլինեն 20սմx20սմ կտրվածքով և 51 մ երկարությամբ: Ընդլայնարահի ետնամասում առկա են թփուտներ և փոքր տրամաչափի մոտավորապես 4-5 հատ ծառեր, որոնք ենթակա են հատման: Հենապատի կառուցման համար նախատեսվում է ընդլայնարահի ետնամասի մոտ 2,0մ լայնությամբ և 50մ երկարությամբ տարածքը մաքրել թփուտներից և ծառերից:



Նկար 9. Ճեմուղի N2-ի ներկա վիճակը



Նկար 10. Վերակառուցվող ճեմուղու գծապատկերը

Նախագծում շենքի նկուղային հարկում գոյություն ունեցող սանհանգույցները և պահեստասենյակը գտնվում են անմխիթար վիճակում: Նախատեսվում է հիմնովին վերանորոգել սանհանգույցները, համապատասխանեցնելով ժամանակակից պահանջներին:

Նախկինում ըմպելասրահի ներսում գոյություն են ունեցել լուսավորության ջահեր, որոնք նախատեսվում է փոխարինել նորերով:

Ըմպելասրահի հիմնական հարթակի և ըմպելասրահի հարակից ճեմուղու միջև, ուղղաձիգ կապը նախատեսվում է իրականացնել հաշմանդամների համար նախատեսված վերելակի, իսկ հիմնական հարթակից դեպի հանքային ջրերի սրահ՝ նաև թեքահարթակի միջոցով:

6.2.1. Պատի և սյուների վերականգնում

- Պատից սյուներից հեռացնել բոլոր այն քայքայված կոտրատված ճաքած, խոռոչավորված, էրոզիայի ենթարկված քարերը, որոնք մշակութային արժեք չեն ներկայացնում, իսկ արժեքավոր քարերի ճաքերը և կոտրվածքները «բուժել»՝ օգտագործելով հիմնականում ֆիրմային պոլիմերային նյութեր:

- Նախապես խոնավացնելուց հետո քերելով մաքրել քարերի մակերևույթը շաղախի և այլ կողմնակի նյութերի մնացորդներից, որոնք հնարավոր է հեռացնել առանց մեծ ուժ գործադրելու:

- Կտրել քարերի բուսականությունը մակերեսի խորքում գտնվող արմատներից և առանց քաշելու հեռացնել:

- Պատից և սյուներից կարանները մաքրել առկա շաղախից զգուշորեն խորացնելով կարանը 2,5-3 սմ -ով:

- Հորատել կարաններում 50-60° թեքությամբ (հորիզոնի նկատմամբ), 10-12 մմ տրամագծով և 50-70 սմ երկայրությամբ ներարկման անցքերը, որոնց տեղերը համարակալված ներկայացված են համապատասխան ներարկման քարտեզներում:

- Օդի շիթով փոշեզրկել հորատած անցքերը և հեռացնել տարիների ընթացքում կարաններում կուտակված հողն ու փոշին:

- Պատը և սյուները լվանալ հոսող ջրով:

- Վերականգնել բոլոր քայքայված քարերից ազատված հատվածները նոր քարե սալիկներով լրացնելով բացակայող սալերը:

Հավելում՝

Քարերը տեղադրելիս պետք է օգտագործել հատուկ մշակված բազմաբաղադրիչ շաղախ:

Ներարկման անցքերը թողնելու համար հորատված անցքում պետք է տեղագրել համապատասխան տրամագծի և կարանախցանող շաղախի նախատեսված խորությունը 10-15սմ–ով գերազանցող ժամանակավոր պլաստիկ խողովակ, շաղախը կարանում տեղագրելուց 10-12 ժամ հետո ժամանակավոր խցանը պետք է հեռացնել: Այդ տեղում կմնա անցք, որտեղ հետագայում կդրվի ներարկման պլաստիկ խողովակ:

6.2.2 Պապի եվ սյունների ամրապնդում

- Պատրաստել մղիչ պոպմը ներարկման աշխատանքների համար: Նախապես ապահովել էլեկտրականության մատակարարումը և ջրի անհրաժեշտ պաշարը:

- Կավով փակել բոլոր անցքերն այն հատվածում, որտեղ պետք է կատարվեն ներարկման աշխատանքներ նախատեսված մեկ օրվա ընթացքում:

- 20-25սմ երկարություն և 1,0-1,2սմ տրամագիծ ունեցող պլաստիկ խողովակներ տեղագրել այն անցքերում, որոնք նախապես թողնվել էին կարանների շաղախային մասում ն դրանք կավով ամրացնել:

- Պետք է ապահովել խողովակների ու դրանց խցանների քանակի առկայությունը ներարկման քարտեզին համապատասխան:

- Ջրով խոնավացնել պատի կամ սյունի խոռոչը:

- Պետք է առավելագույնս ուշադրություն դարձնել ջրի քանակին, որպեսզի պատը չդողվի ջրով, այլ միայն խոնավանա:

- Ջրի ներարկումը պետք է իրականացնել օգտագործելով բերված ներարկման քարտեզին հակառակ հերթականությունը, շարժվելով «վերնից-ներքն», ընդ որում բոլոր դրված խողովակները պետք է լինեն թաց, այսինքն՝ խցանները դրված չլինեն:

- Ամրապնդել քարե սալիկների մակերևույթը հատուկ նյութով մակերեսը խոնավեցումից 24 ժամ անց:

- Մակերևույթի ներքևում գտնվող որևէ քարտեզում նշված պայմանական «ո» համարի անցքից (բոլոր խողովակների բաց վիճակում) ներարկումը պետք շարունակել այնքան ժամանակ, մինչև շաղախը երևա մոտակա որևիցե խողովակում:

- Եթե այդ խողովակը գտնվում է ներարկվող անցքի համեմատ նույն մակարդակի վրա, ապա այդ խողովակը խցանվում է, իսկ ներարկումը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև շաղախը երևա ավելի բարձր գտնվող խողովակում: Այդ դեպքում ներարկումը դադարեցվում է համար «ո» անցքում տեղադրված խողովակը խցանվում,

իսկ ներարկումը վերսկսվում է (ըստ քարտեզի) հաջորդ համար «n+1» անցքում տեղադրված խողովակից:

- Պետք է հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ անկախ նրանից, որտեղ է երևացել շաղախը, ներարկումն իրականացվում է խիստ հերթականությամբ:

- Եթե խողովակը շաղախի երևալու պատճառով փակվել է խցանով, ամենևին չի նշանակում, որ դա վերջնական է: Այդ խողովակներից ներարկումը պետք է շարունակել ըստ նշված հերթականության:

- Փակել անցքերը «Antique MC» նյութով տեղադրված խողովակները հեռացնելուց հետո:

- Տանիքի, կամարների վերևի մասում, ծածկույթների համար օգտագործվում է գրեթե նույն տեխնոլոգիան, միայն ցեմենտային ներարկման նյութի փոխարեն կօգտագործվի «Eporic» էպոկսիտային նյութը:

- Որպես այլընտրանքային տարբերակ, առաջարկվում է դիտարկել տանիքի մետաղական ծածկի գորգի հեռացումը (հնարավորինս կիրառված նյութերի պահպանումով) և ծածկի գոյություն ունեցող կոնստրուկցիաների ճեղքերի կամ նոր բացված անցքերի միջոցով ներարկման իրականացման հնարավորությունը:

6.2.3. Քարե մակերեվոյի ախտահանում

Հոսող ջրով լվալ պատերի ամբողջ մակերևույթը: Լվացվող ջրերը գոյություն ունեցող համակարգով կհոսեն քաղաքային կոյուղու համակարգ: Լվացման ջրերի մոտավոր ծավալը կարող է կազմել մոտավորապես 20–25մ³, այս ծավալի արտահոսքի հեռացումը չի բերի կոյուղու բեռնվածության:

6.2.4. Քարե մակերևույթի պաշտպանություն

- Ծածկել «Antipluviol» հատուկ ֆիրմային նյութով լվացած պատի կամ սյունի ամբողջ արտաքին քարե մակերևույթը (լիովին չորանալուց հետո):


- Պատի ամբողջ ներսի (ըմպելաարահի ետևում ընկած պատի հատվածը) քարե մակերևույթի հետ կապված աշխատանքերը կիրականացվեն հաշվի առնելով ներկա վիճակը և թե ինչ հարթեցման ճարտարապետական լուծում կգտնվի (օրինակ սվաղ), նույնպես կարելի է պաշտպանել «Antipluviol» նյութով:

6.2.5. Գոյություն ունեցող ճեմուղու վերակառուցում


- N1 ճեմուղու գոյություն ունեցող ե/բետոնե բլոկները ապամոնտաժել և կառուցել նոր բետոնե հիմքով և բրեկրա տեսակի ծածկով նոր ճեմուղի:

- Բետոնե ճեմուղու եզրերն իրականացնել բազալտե 10x20սմ թաղված եզրաքարերով:


- Ճեմուղի N1-ի աստիճանավանդակները վերանորոգել և իրականացնել բազալտե երեսապատում:
- Հարթակի քանդում և նոր հարթակի կառուցում:
- Հարթակի ձախ կողմում ստորին հենապատերի կառուցում՝ բազալտե թասակներով:
- N2 ճեմուղու եզրերում իրականացնել բազալտե 10x20սմ թաղված եզրաքարերով:
- Մեծ թեքությամբ տեղամասերում կառուցել աստիճաններ, որոշ հատվածներում տեղադրել մետաղական բազրիք՝ համապատասխան բետոնե հիմքով:
- Ճեմուղու վերջում կառուցել փոքր հարթակ:




Նկար 11. Ընդլայնարահի տեղադրիչը



Նկար 12. Արդարքին պարկերը



Նկար 13. Ընդլայնված հուշարձանի ճակատ



Նկար 14. Հատակագիծ ազգային կկորդինատային համակարգով

ՇՐՔԱՆՈՒՄԻ ԼՈՐՄԻՍ ԳՆԱԿՐԱՆՔԻ ԿԵՐԱՆՈՒՄՆԵՆ ՁԱՆՏԱԿ ԴԱՏԻ ՖԵՆՈՒՑԵ ԵՐԵՄԱՆՑՆԵՆ ԿՐԱ ԱՄՈՒՅԱԿ ՔԱՅԱՆՑ ԱՍԵՐԻ ՏԵՍԵՐ (դր. 1):

ՇՐՔԱՆՈՒՄԻ ԼՈՐՄԻՍ ԳՆԱԿՐԱՆՔԻ ԿԵՐԱՆՈՒՄՆԵՆ ՁԱՆՏԱԿ ԴԱՏԻ ՖԵՆՈՒՑԵ ԵՐԵՄԱՆՑՆԵՆ ԿՐԱ ԱՄՈՒՅԱԿ ՔԱՅԱՆՑ ԱՍԵՐԻ ՏԵՍԵՐ (դր. 2):

ՇՐՔԱՆՈՒՄԻ ԶԱԿԱՑԱԿԻ ՀԱՑ-ԱՅՏԵՐՈՒՄ ԱՊԱԿ ԵՆ ԱՐԲՐՈՒԹՅԱՐ ՎԱՅԱԿԱՑ ԱՐՏԱԿԻ ԵՐԵՄԱՆՑՆԵՆ ՔԱՐԵՐ (դր. 3):

ՇՐՔԱՆՈՒՄԻ ԶԱԿԱՑԱԿԻ ՀԱՑ-ԱՅՏԵՐՈՒՄ ԱՊԱԿ ԵՆ ԱՐԲՐՈՒԹՅԱՐ ՎԱՅԱԿԱՑ ԱՐՏԱԿԻ ԵՐԵՄԱՆՑՆԵՆ ՔԱՐԵՐ (դր. 4):

ՇՐՔԱՆՈՒՄԻ ԱՑ ԵՎ ՕՏԱ ԱՐԿԱՆԵՐԻ ԾՈՂԱՅԻՆ ԵՐ ԵՏԻՔԻ ԱՍԵՐԻ ԼՈՐԿԱ ԿԻՃԱԿ (դր. 5):

ՇՐՔԱՆՈՒՄԻ ԼՈՐՄԻ ՔՐԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՆՈՒՆՈՒՄ ԱՐՏԱՑԱՑ ԲԱՑ-ԱՅՏԵՐԱՐԸ (դր. 6):

ՇՐՔԱՆՈՒՄԻ ԼՈՐՄԻ ՀԱՑ-ԱՅՏԵՐԻ ԱՐՄԱԿԱՆՆԵՆ ԵՆԹԱՐԿԱԿՑ ԵՐԵՄԱՆՑՆԵՆ ԱՍԵՐԻ ԼՈՐԿԱ ԿԻՃԱԿ (դր. 7):

ԼՈՑ ԸՄՈ	Գ. Ասրոզյան		ԸՐԳԵՍՈՒՆՆԵ ՉԵՐԱՐՑՆԵ ԵՆԿԻ ԿԵՐԱԿՈՑՈՒՄ, ԻՐԱՆԱՊԵՆ, ԹՄԱՆՈՒ ԿԵՐԱՆԱԿՈՒՄ ԵՎ ՈՐՏԵՐԻ, ԱՏԻՔԻ ԵՐԹԱՎԵՐԻՑԻՑԵՆ ԱՎԱՅԻՑ		
Խորհրդատու Հասցեագրում	Ա. Ասրոզյան				
«ԱՐՄՏՐՈՅ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆՆԻ Ա. ԱՐԱՆՅԵԼՅԱՆ			ՆՈՒՍԱԿԱՐՆԵՐԻ ՈՐՈՒՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԷՁ 1		
			Քարտեզագրող/արտոնագրող ժյու 1	ՓԲԼ ՇՏԱՅԻՆ	ՈՐԴՈՒՄ ՏԻՔ 1
			ՍՇ	ՍՇ-4	ՍՑ

Նկար 15. Ընդլայնարահի պատերի և սյուների ներկա վիճակը

ՇՄԵԼԱՄՐԱՐԻ ԵՏԼԱՍԱՍՈՒՄ ԳՏԼԱՌԻ ԿԱՑՎԱԾՈՒՅՑԻ ԼՆՐՎԱՎԻՃԱԿԸ (դրս. 8)

ՇՄԵԼԱՄՐԱՐԻ ԵՏԼԱՍԱՍՈՒՄ ԳՏԼԱՌԻ ԿԱՑՎԱԾՈՒՅՑԻ ԿԻՑ ԹԵՑՈՒՆ ԴՆՏԵՆՇԻ ԼՆՐՎԱՎԻՃԱԿԸ (դրս. 9)

ՇՄԵԼԱՄՐԱՐԻ ԱՏ ԴԱՏԱՍՏՈՒՄ ԳՏԼԱՌԻ ԴԱՍՄՐԱԿԱԿԱՆ ԱՆԼԱՄԱՆԻՑԻ ԴԵՆԱԴՆՏԻ ԼՆՐՎԱՎԻՃԱԿԸ (դրս. 10)

ՇՄԵԼԱՄՐԱՐԻ ԱՏ ԴԱՏԱՍՏՈՒՄ ԳՏԼԱՌԻ ԴԱՍՄՐԱԿԱԿԱՆ ԱՆԼԱՄԱՆԻՑԻ ԵՎ ՄՈՒՅԵՒ ԴԱՏԱԾԻ ԼՆՐՎԱՎԻՃԱԿԸ (դրս. 11)

ՇՄԵԼԱՄՐԱՐԻ ԼՆՐՈՒՆԻ ԼՈՒՍԱԿՈՒՄԹՅԱՆ ԼՆՐՎԱՎԻՃԱԿԸ (դրս. 12)

ՇՄԵԼԱՄՐԱՐԻ ԼՆՐՈՒՆԻ ԵՎ ԱՐՏԱՅԻՆ ԼՈՒՍԱԿՈՒՄԹՅԱՆ ԼՆՐՎԱՎԻՃԱԿԸ (դրս. 13)

ՇՄԵԼԱՄՐԱՐԻ ԱՍՏՈՒՆԵՐԻ ԵՐՎՈՐՈՒՄ ԼՆՐՎԱՎԻՃԱԿԸ (դրս. 14)

ՇՄԵԼԱՄՐԱՐԻ ԱՍՏՈՒՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԾԻ ԱՍՏՈՒՆԵՐԻ ԼՆՐՎԱՎԻՃԱԿԸ (դրս. 15)

ՀԾԸ ԸՄԻ	Գ. Ասրաբջյան		ԸՄԻՋԱՆՈՒՄ ԶԻՆՉՆԵՐ ԵՎ ԳԵՐՈՒԹՅՈՒՆ, ՈՐԱՌՈՒՄԹՅԱՆ, ՄԱՍԻՎԻ ԶԻՐԱՆՎԱՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԻ, ԱՆԻՔԻ ՎՈՐԵՎՈՐԻՑԻ ԿԱՄԵՐԻ		
Խրտհրթառու Հասցե/տաս	Լ. Ասրաբջյան				
«ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ՝ Ա. ԱՌԱՅԵԼՅԱՆ		ԼՈՒՍԱԿԱՐՆԵՐԻ ՈՐԱՌՈՒՄՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԷՅ 2		Տարեգրաստագրաբան	
				Պր. 1	
				ՓՈՒԼ ՇՏԱԶԻԵ	ՊՈՒՐՈՒ ՇՈՒԿ
				ԸՍ	ՈՇ-5
					56

Նկար 16. Ընդլայնարահի սանհանգույցի, կցակառույցի, երկամասի և սափորների ներկա վիճակը

7. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՆԵՐ ԵՎ ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

7.1 Նախապատրաստական աշխատանքների բնութագրերը

Նախատեսվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի տարածքում գտնվող ընդլայնարահի հուշարձան շենքի և ընդլայնարահին կից ճեմուղու վերակառուցում ուժեղացումով և բարեկարգումով, և մասնակի վերականգնումով:

Շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

1. մինչ շինարարական հրապարակում որևէ աշխատանք կատարելը պետք է համապատասխան կազմակերպությունների հետ համաձայնեցված /ենթակառուցվածքի սեփականատեր/ ստանալ թույլտվություններ

2. Կազմակերպել շինհրապարակ

3. Կազմել առանձին աշխատանքների իրականացման ժամանակացույց:

Գործունեության իրականացման համար անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- շինհրապարակի ժամանակավոր ցանկապատում՝ հետիոտն գլխածածկույթով
- շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- շինհրապարակի գիշերային լուսավորվածություն
- աշխատանքների արդյունքում առաջացած թափոնների տեղափոխում Ջերմուկի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

7.2. Շինարարական աշխատանքների բնութագրերը

Նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- ✓ Ընդլայնարահի կառույցի վերակառուցում ուժեղացումով և բարեկարգումով
- ✓ Ջրամատակարարման և ջրահեռացման, և կոյուղու համակարգերի վերականգնում
- ✓ Կառույցի արտաքին լուսավորության համակարգի ստեղծում
- ✓ Ընդլայնարահի հարթակի վերականգնում
- ✓ Սանիտարական հանգույցի վերակառուցում:

✓ Ընկերության, հարակից հարթակի և երիզող հենապատերի վերակառուցման և ամրացման աշխատանքներ:

- ✓ Ընկերության ետնամասի կցակառուցյի վերակառուցման աշխատանքներ,
- ✓ Ընկերության ետնամասում հենապատի և ջրահեռացման ուղիների կառուցում:

Հարթակների վնասված հատվածների և անորակությունները վերացնելու նպատակով առաջարկվում է հետևյալ միջոցառումները

- հնարավորինս առանց վնասելու հեռացնել սրահի աջ կողմի շինությունների ծածկի բազալտե երեսապատման սալիկները, չորացնել ծածկի կոնստրուկցիաների ջրահագեցած մակերևույթները և վերանորոգել հարթեցնող շերտի վնասված հատվածը,
- իրականացնել հիդրոմեկուսիչ նոր շերտ, օգտագործելով ժամանակակից որակյալ նյութեր, պահպանելով հանրապետությունում գործող քաղաքաշինական նորմերի պահանջները,
- նորից իրականացնել բազալտե պաշտպանիչ շերտի սալիկների տեղադրումը պահպանելով իրականացման բոլոր տեխնոլոգիական պրոցեսները,
- քանդել սրահի աջակողմյան հատվածի միջանկյալ հարթակ տանող աստիճանները և հենապատը, և լիարժեք հիմնատակ ստեղծելուց հետո նորից իրականացնել աստիճանները և հենապատը:

Ընկերության նկուղային հատվածի շահագործման հատկանիշները բարձրացնելու նպատակով առաջարկվում է.

- քանդել սրահի նկուղի ծածկն ամբողջ երկայնությամբ առանց վնասելու երկայնական ուղղությամբ գոյություն ունեցող երկաթ բետոնյա հեծանները, համապատասխան հաշվարկային հիմնավորումներով և նախագծով իրականացնել նոր ծածկ առանձնակի ուշադրություն դարձնելով բետոնից պաշտպանիչ շերտի իրականացմանը, բետոնի անհրաժեշտ խտացման ապահովմանը,
- հնարավորության դեպքում օգտագործել ջրամերժ հավելանյութերի բետոնի քանդում,
- իրականացնել նոր փակ ջրհավաք օգտագործելով իներտ նյութերից պատրաստված խողովակներ:

Ընկերության ետնամասում առկա կցակառուցյի հիմնովին քանդում և նորի վերակառուցում, ինպես նաև նոր հենապատի կառուցում.

- Նախագծով նախատեսված է նոր կառուցվող կցակառուց, որն իրականացվում է որպես ինքնակրող պատ: Կցակառուցը իրականացվում է երկաթբետոնից: Հիմքերը

հարթ ժապավենի տեսքով, 300 մմ հաստությամբ: Սյուները երկաթբետոնե 300 x 300 մմ հատույթի չափերով: Հեծանները երկաթբետոնե 400 (h) x 300 մմ: Նախատեսված է "Ե" - "Դ" առանցքներով գոյություն ունեցող երկաթբետոնե սալի ապամոնտաժում և նոր երկաթբետոնե սալի իրականացում, որը տեղադրված է մետաղական 12Ե1 երկտավրերի վրա:

- ընդլայնված թիկունքային երկայնական պատը կցակառույցի ներսի սահմաններում սվաղել ցեմենտ-ավազե շաղախով՝ նախապես մաքրելով շարվածքից թափված շաղախի մնացորդները, իսկ քարերի միջև առկա ճաքերը փոշուց թույլ շաղախի կտորներից,
- սելավային հոսքաջրերի և հողերի թափման
- գործող նորմերին համապատասխան, վերակառուցել սրահի կցակառույցի տանիքը, թիթեղյա ծածկը, հասցնելով մինչև հիմնական պատի ստորին նիշը
- հարթեցնել և իրականացնել կցակառույցի նոր հատակ, սվաղել կցակառույցի արտաքին պատը ներսի կողմից:
- համաձայն հավաստագրված կազմակերպության կողմից տրված եզրակացության սրահի հիմնական պատի շարվածքի ամրությունը տատանվում է B5-B7.5 դասի սահմաններում:

Այդ պատի ամրությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է մետաղական ցանցի կիրառումով իրականացնել ցեմենտ-ավազե սվաղ:

Բացի այդ, շարվածքի դատարկությունների ուլտրաձայնային ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շարվածքի մեջ առկա են դատարկություններ միջինացված 0,39մ շարվածքի տարբեր հատվածներում:

Նշված դատարկությունները լցնելու, ինչպես նաև քարե շարվածքի արտաքին մակերևույթները պահպանելու նպատակով հարցումներ են արվել այդ գործունեությունն իրականացնող կազմակերպություններին, և առաջարկվել է կիրառել ներարկման նոր սկզբունք, որը հնարավորություն կտա լրացնել այդ դատարկությունները և պահպանելու քարե շարվածքների արտաքին մակերևույթները մթնոլորտային տեղումների ազդեցությունից:

7.3. Աշխատանքների անվտանգության կանոններ

Վթարային իրավիճակների, վնասվածքների, հիվանդությունների առաջացման աղբյուր է հանդիսանում անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումը, որոնց

նախազգուշացման համար պետք է ընդունվեն ստորև բերվող անհրաժեշտ միջոցառումներ:

Աղյուսակ 7.3.1. Աշխատանքային պայմանների անվտանգության խախտման նախազգուշական միջոցառումները

Խախտման հնարավոր հետևանքները	Խախտման պատճառը	Խախտման նախազգուշական միջոցառումները
Ոչ ճիշտ առասանում (строповка) և կոնստրուկցիայի տեղադրում, վնասվածքներ բռնիչ սարքերից, կառճատեսության նշաններ	Աշխատանքային զոնայի թույլ լուսավորում	Լրացուցիչ լուսավորման սարքերի տեղադրում, աշխատանքային զոնայի լուսավորության համար
Էլեկտրականության խափանումներ	Աշխատանք էլեկտրական գծերի մոտ առանց թույլատվության (наряд-допуск), էՀԳ և ամբարձիչի, պահեստի հեռավորության գերազանցում	ԷՀԳ և ամբարձիչի, պահեստի թույլատրելի հեռավորության պահպանում
Տեղափոխվող կոնստրուկցիայից, առասանման սարքից վնասվածքներ	Ձայնային ազդանշանի բացակայում, նախազգուշական ազդանշանի ոչ ճիշտ մատուցում	Ազդանշանի պարբերաբար ստուգում, նրա աշխատանքի անսարքության վերացում: Առասանող բանվորների գիտելիքների ստուգում և նրանց ատեստացիա
	Որակագրկված և մաշված բեռաբռնիչ սարքերի օգտագործում	Բեռաբռնիչ սարքերի պարբերաբար տեխնիկական վերահաստատում
Բանվորի ժամանակից շուտ հոքնածություն, գլխապտույտ և փսխում:	Աշխատանքների իրականացում այն զոնաներում, որտեղ նորմաներից գերազանցում են աղմուկը, վիբրացիան, գազերի առկայությունը, աշխատանքային զոնայի տեսադաշտի բացակայում	Աղմուկի, վիբրացիայի, գազավորման թույլատրելի նորմերի պահպանում, աշխատանքային զոնայի տեսադաշտի ապահովում

Մրսածության հիվանդություններ և ցրտահարումներ:	Նորմաներով սահմանված ջերմաստիճանից ցածր պայմաններում աշխատանք	Աշխատանքի դադարեցում, տաքացվող տնակի տեղադրում
---	---	--

Համաձայն ՀՀ կառավարության 2002 թ. ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի «Հիմնարկները, իրավաբանական և ֆիզիկական անձինք աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից պարտավոր են դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին»:

Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա թեքություն ոչ ավել քան 5°:

Բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը, որոնք օգտագործվում են բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ, պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին:

Շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն համաձայն ՇՆԱԿ III-4-80* «Անվտանգության տեխնիկական շինարարության մեջ»:

Շինարարության տևողությունը

Շինարարության տևողությունը որոշվել է՝ ըստ օրացույցային գրաֆիկի հիման վրա և կազմել է առավելագույնը 12 ամիս:

Շինարարության նորմատիվ ժամկետում հաշվի են առնված՝

- նախապատրաստական շրջանի տևողությունը
- նախագծվող օբյեկտի շինարարությունը
- կոմպլեքսային փորձարկումներ, անհրաժեշտ գործարկման և կարգաբերման աշխատանքները:

Նախատեսվող շինարարական և տրանսպորտային միջոցները ներկայացված են ստորև.

Աղյուսակ 7.3.2. Մեքենաների և մեխանիզմների մոտավոր քանակները

Հ/Հ	Մեքենաների և մեխանիզմների անվանում	Մեքենաների քանակը, հատ
1	Ավտոակոունկ	1
2	«ԿԱՄԱՁ» ավտոբեռնատար մեքենաներ	2
3	Էքսկավատոր	1

7.4. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Նախատեսվող գործունեության իրականացման համար շինարարական աշխատանքների ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում բնական քարեր՝ բազալտե չորսվակասալեր, ցեմենտ, ավազ, խիճ, ամրան, մետաղական կոնստրուկցիաներ և այլն:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը օգտագործվելու է հրապարակների ջրցանի և աշխատողների խմելու և կենցաղային նպատակների համար:

Ջրցանի ջրապահանջը կկազմի՝

$W_1 = S \times L \times T \times K$, որտեղ

S - ջրցանվող տարածքի մակերեսը, միջին՝ 200 մ²,

L - ջրցանի նորմը, 0.5 լ/մ²,

T - աշխատանքային օրերը՝ 330,

K - օրական ջրցանի թիվը, 2

$W_1 = 200 \times 1.5 \times 330 \times 2 = 198000$ լ կամ 198 մ³ ամբողջ ընթացքի համար:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսի հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$W_2 = (n \times N + n_1 \times N_1) \times T$

որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է - 3

N - ջրածախսի նորման ԽՍՀ համար՝ - 0.016մ³/մարդ օր,

n₁ - բանվորների թիվն է - 18,

N₁ - ջրածախսի նորման բանվորների համար՝ - 0.025մ³/մարդ օր,

T - աշխատանքային օրերի առավելագույն թիվը՝ 330 օր:

$W_2 = (3 \times 0.016 + 18 \times 0.025) \times 330 = 164$ մ³/շին.ժամ:

Սպասարկող անձնակազմը օգտվելու է Ջերմուկի համայնքապետարանի կողմից հատկացվող շինությունից, որն ապահովված է ջրամատակարարման և կոյուղու համակարգերով:

Խմելու ջրի և ջրցանի աղբյուրը քաղաքային ջրամատակարարման ցանցն է, որի հետ համապատասխան պայմանագիր կկնքվի փորձաքննական դրական եզրակացություն ստանալուց հետո:

8. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

8.1 Ռիսկերի գնահատում

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ, սակայն վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև՝ պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- բետոնային աշխատանքների ժամանակ
 - դիզելային վառելիքի արտանետումներ տեխնիկայի շահագործման ժամանակ
 - շենք-շինությունների, մասնավորապես՝ կցակառուցի, ձեռքով քանդման աշխատանքների ժամանակ
 - բնահողի քանդման-հանման աշխատանքների հետ կապված
 - ճեմուղու արտաքին լուսավորության հենասյուների տեղադրման աշխատանքներով պայմանավորված,
 - շինադրի տեղափոխման հետ կապված
 - տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:
- Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

8.2 Օդի աղտոտում

Վերը ներկայացված աշխատանքների ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված կցակառուցի քանդման, ընկերության ետնամասում հենապատի կառուցման համար տարածքի հարթեցման, հենապատի հիմքի փորման, հանվող գրունտի, հետլիցքի, աշխատանքներով և տեխնիկական միջոցների աշխատանքից դիզելային ալիքի այրման արգասիքներով:

Շինարարության տարբեր փուլերում շահագործվելու է տարբեր տեսակի շինտեխնիկա: Քանդման և հողային աշխատանքներ՝ հին կցակառուցի քանդում, հենապատի հիմքի փորում, գրունտի տեղափոխում, հետլիցք, տարածքի հարթեցում:

Շինարարության ժամանակահատվածում մթնոլորտային օդի վրա ազդեցության հիմնական աղբյուրներն են.

- Կցակառուցի քանդման ժամանակ փոշու արտանետումները,

- Հենապատի հառուցման ժամանակ փոշու արտանետումները,
- հողային աշխատանքների ժամանակ փոշու արտանետումները,
- Ճեմուղիների վերակառուցման և արտաքին լուսավորության համար հենաայուների տեղադրման ժամանակ փոշու արտանետումները,
- շինարարական տեխնիկայի, ավտոտրանսպորտի աշխատանքի ժամանակ ծխազագերի արտանետումները:

Աշխատանքները կկատարվեն շինարարության ողջ ընթացքում, ըստ ժամանակացույցի, օրվա ընթացքում 7-8 ժամ: Սույն աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ շինարարական տեխնիկայի տեսակն ու քանակը ներկայացված է 7.3. կետում: Դիզ.վառելիքի ծախսը կկազմի մոտ 3-3,5 տոննա:

Աղյուսակ 8.2.1. Շինաշխատանքների ժամանակ առաջացած փոշու քանակը

Ցուցանիշի անվանումը	Հանույթի և բեռնվող նյութերի քանակը, G, T	Ֆրակցիայի բաժնենմասը, K1	Աերոզոլի փոխանցվող փոշու բաժնենմասը, K2	Տեղանքի կլիմայական պայմանները հաշվի առնող գործակիցը, K3	Ելույթի խոնավությունը հաշվի առնող գործակից, K5	Ելույթի խոշորությունը հաշվի առնող գործակից, K7	Տեղանքի պայմանները հաշվի առնող գործակից, K4	Թափման բարձրությունը հաշվի առնող գործակից, B	Փոշու արտանետումների հաշվման բանաձևը տ/2 ժամ A=G*k1*k2*k3*k4*k5*k7*B	Ընդամենը փոշի
Կցակառույց										
1. Պատերի քանդում և բեռնում	8.5	0.04	0.01	1	0.7	0.5	1	0.5	0.00060	0.030
2. Հանված հող	165	0.04	0.01	1	0.7	0.5	1	0.5	0.01155	
3. Հետլիցք	110	0.04	0.01	1	0.7	0.5	1	0.5	0.00770	
4. Խճի լիցք	100	0.04	0.02	1	0.6	0.4	1	0.5	0.00960	
5. Հարթեցում	11.5	0.04	0.01	1	0.7	0.5	1	0.5	0.00081	
Հենապատ										
1. Հանված հող	200	0.04	0.01	1	0.7	0.5	1	0.5	0.01400	0.047
2. Հետլիցք	180	0.04	0.01	1	0.7	0.5	1	0.5	0.01260	
3. Խճի լիցք	210	0.04	0.02	1	0.6	0.4	1	0.5	0.02016	
Ճեմուղի										
1. Հանված հող	54.6	0.04	0.01	1	0.7	0.5	1	0.5	0.00382	0.011
2. Հետլիցք	7.8	0.04	0.01	1	0.7	0.5	1	0.5	0.00055	
3. Խճի լիցք	56.6	0.04	0.02	1	0.6	0.4	1	0.5	0.00543	
4. Հարթեցում	12	0.04	0.01	1	0.7	0.5	1	0.5	0.00084	

Աղյուսակ 8.2.2. Շինարարական տեխնիկայից և ավտոմեքենաներից մթնոլորտ արտանետվող վնասակարնյութերի հաշվարկը

Ցուցանիշի անվանումը	Մթնոլորտ արտանետման տեսակարար նորման գ/կգ	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը շինարարության ժամանակ, գ/տ	
		Կցակառույց և հենապատ	Ճեմուղի
Դիզելային վառելիքի գումարային ծախսը, կգ		2300	1200
Մթնոլորտ արտանետումներ			
1. Ածխածնի օքսիդ	36.4	0.084	0.044
2. Ածխաջրածիններ	8.4	0.019	0.010
3. Ազոտի օքսիդներ	42.3	0.097	0.051
4. Մուր	4.3	0.010	0.005
5. Ծծմբային անհիդրիդ	0.002	0.000005	0.000002
Ընդամենը		0.210	0.110

8.3. Հողային ռեսուրսներ

Հողային աշխատանքների ընթացքում հանվելու է բերրի հողաշերտը և պահպանվելու գործող նորմերին համապատասխան:

Նախատեսվող գործունեության տարածքում հողային ծածկույթի վրա բացասական ազդեցություններ չեն նախատեսվում, քանզի բուսաշերտը և հողի բերրի շերտի ամբողջ զանգվածը հանվելու է միայն կցակառույցի և հենապատի կառուցման, ինչպես նաև ճեմուղու արտաքին լուսավորության համար հենասյուների տեղադրման վայրերից:

Հողային աշխատանքներ իրականացվելու են շինարարության տարբեր փուլերում և հաճախականությամբ: Հողի բերրի շերտի հանումը և հանված բերրի շերտի պահպանումն ու օգտագործումը կիրականացվի համաձայն ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 2-ի N 1404-Ն որոշման:

Ըստ նախնական հետազոտության աշխատանքների իրականացման տեղամասերից կկտրվի և կհանվի մոտավորապես 27մ³ բուսահող: Բուսահողը կպահեստավորվի հատուկ տարածքում՝ պաշտպանված մթնոլորտային տեղումներից և այլ գոծոնների ուղղակի ազդեցությունից: Հանված բուսահողը կօգտագործվի տարածքի բարեկարգման համար:

8.4. Զրոգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Սույն աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շին հրապարակի ջրցանի, պատերի լվացման և կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Անհրաժեշտ ջրաքանակի մատակարարման աղբյուրը կհամաձայնեցվի Ջերմուկի համայնքապետարանի հետ, դրական փորձաքննական եզրակացություն ստանալուց հետո:

8.5. Աղմուկ և թրթռում

Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ:

Շինարարական աշխատանքների կատարման ժամանակ անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը առաջացող աղմուկն է: Հատկապես կարևորվում է աղմուկի մակարդակի ուսումնասիրությունն ու գնահատումը Ջերմուկ բնակավայրի տարածքում:

Ըստ գործող նորմատիվ պահանջների, աղմուկի թույլատրելի մակարդակը բնակելի գոտում կազմում է 45դԲԱ: Աղմուկի ազդեցությունը ազդակիր Ջերմուկ բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Տեղամասի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ շին.հրապարակում կատարվող կցակառույցի քանդման, բարձման և տեղափոխման աշխատանքները, հենապատի կառուցման համար հիմքի խրանուցու փորման աշխատանքները, ճանապարհներին տրանսպորտի տեղաշարժը, շինարարական գործիքներից առաջացած աղմուկը և այլն:

Շինհարապարակում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 80դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում

որոշվում է՝ LAտար = LAէկվ - ΔLAհեռ - ΔLAէկր - ΔLAկանաչ բանաձևով, որտեղ՝

LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=80դԲԱ,

ΔLAհեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, ΔLAհեռ կազմում է 15դԲԱ,

ΔLAէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (շին.հրապարակ), ΔLAէկր =20դԲԱ,

ΔLAկանաչ- աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, ΔLAկանաչ=5դԲԱ:

Աղմուկի մակարդակը մոտակա բնակավայրի մոտ կկազմի՝

$L_{առար} = L_{աէկվ} - \Delta L_{ահեռ} - \Delta L_{աէկր} - \Delta L_{ականաչ} = 80-15-20-5 = 40 \text{ դԲԱ}$ (նորման 45 դԲԱ):

Գիշերային ժամերին շինարարական աշխատանքներ ըմպելասրահի տարածքում չեն կատարվելու:

Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող մեքենաների և տեղում աշխատող տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115 դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112 դԲԱ:

Հաշվի առնելով վերը բերված հիմնավորումը, հաշվարկային ձայնային ազդեցությունը բնակավայրում կգտնվի նորմայի սահմաններում (գիշերային ժամերին՝ 45 դԲա, ցերեկը՝ 55 դԲա):

8.6. Թափոնների կառավարում

Նախատեսվող գործունեության ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ /մնացորդային հողային զանգվածներ, բետոնյա ծածկույթ և այլն/, որոնք սահմանված կարգով նախատեսված են տեղափոխել Ջերմուկի համայնապետարանի կողմից տրամադրված համապատասխան աղբավայր:

Ըստ նախնական գնահատման աշխատանքների ընթացքում կառաջանա 20 -30մ³ ծավալով շինարարական աղբ:

Համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 25.12.2006թ.-ի N430-Ն հրամանի հավելվածի՝ շենքերի քանդումից առաջացող թափոնները ներկայացված են՝ շինարարական աղբով, որը նախնական տվյալներով կազմում է մոտավորապես՝ 9տ, ծածկագիր՝ 91200601 01 00 4 /վտանգավորության 4-րդ դաս/ :

Շինարարական աշխատանքների ընթացքում անձնակազմի կենսագործունեության արդյունքում կառաջանա նաև կենցաղային աղբ՝ 8.2մ³, որը կհեռացվի համայնքի կողմից հատկացված աբավայր: Աղբը, ըստ ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 25-ի 430-Ն հրամանի Հավելվածի, համապատասխանում է «Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)» տեսակին, դասիչ՝ 91200400 01 00 4 :

8.7. Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն

Նախատեսվող գործունեության ազդեցությունը լիարժեքորեն գնահատելու համար անհրաժեշտ է այն դիտարկել տարածքի բոլոր աղտոտող գործոնների հետ համալիր և շրջանի պոտենցիալի ենթատեքստում:

Տեխնածին ազդեցության տեսակետից հուշարձան շենքի տարածքում որևէ արտադրական ձեռնարկություն չկա, հիմնական աղտոտման աղբյուր կարող է հանդիսանալ ավտոճանապարհի երթևեկությունը: Սակայն հաշվի առնելով հուշարձան շենքի տեղադիրքով պայմանավորված մեքենաների քիչ երթևեկությունը՝ հավաքական արդյունք չի սպասվում:

9. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻՆ ՀԱՍՑՎՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Համաձայն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի, բնությանը հասված տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է համաձայն «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգի»՝ հաստատված 21.01.2005թ. թիվ 91-Ն ՀՀ կառավարության որոշման:

Նախատեսվող գործունեությունից արտանետումների հետևանքով մթնոլորտի վրա հասցված տնտեսական վնասի հաշվարկը կատարվում է հետևյալ բանաձևով.

$$U = \sum_{q} \Phi_{g} \cdot \sum_{i} P_i \quad (1),$$

U - ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամներով

\sum_{q} - աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, որը վերցվում է համաձայն նշված կարգի 9 աղյուսակի:

\sum_{i} - i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է, որը կուրորտային և առողջարանական գոտիների, արգելոցների, արգելավայրերի դեպքում ընդունվում է 10:

P_i -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Φ_{g} -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Մեթոդակարգի համաձայն,

$\Phi_{g} = 1000$ դրամ:

P_i գործակիցը որոշվում է 5-րդ բանաձևով՝

$$F_i = q * S_{U_i} \quad (5)$$

S_{U_i} - i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

q - գործակից, $q=1$ ՝ անշարժ աղբյուրների համար, $q=3$ ՝ շարժական աղբյուրների (ավտոտրանսպորտի) համար:

S_{U_i} - i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Նախատեսվող գործունեությունից արտանետումների հետևանքով շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասի հաշվարկը բերված է ստորև աղյուսակում:

Աղյուսակ 9.1. Տնտեսական վնասի հաշվարկ

Կցակառույց և հենապար

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Շգ	Փց	Վի	Տնտեսական վնասը. ՀՀ դրամ $U = \text{Շգ} \cdot \text{Փց} \cdot \sum \text{Վ}_i \cdot F_i$
	S_{U_i}	q	$F_i = S_{U_i} \cdot q$				
Փռշի	0.076	1	0.076	10	1000	10	7 642
Ածխածնի օքսիդ	0.084	1	0.084	10	1000	1	837
Ածխաջրածիններ	0.019	1	0.019	10	1000	3	580
Ազոտի օքսիդներ	0.097	1	0.097	10	1000	12.5	12 161
Մուր	0.010	1	0.010	10	1000	41.5	4 104
Ծմբային անհիդրիդ	0.000005	1	0.000005	10	1000	16.5	0.759
Ընդամենը							25 325

Ճեմուղի

Արտանետվող նյութերի անվանումը	Հաշվարկի համար անհրաժեշտ ցուցանիշները			Շգ	Փց	Վի	Տնտեսական վնասը. ՀՀ դրամ $U = \text{Շգ} \cdot \text{Փց} \cdot \sum \text{Վ}_i \cdot F_i$
	S_{U_i}	q	$F_i = S_{U_i} \cdot q$				
Փռշի	0.011	1	0.011	10	1000	10	1 064
Ածխածնի օքսիդ	0.044	1	0.044	10	1000	1	437
Ածխաջրածիններ	0.010	1	0.010	10	1000	3	302

Ազոտի օքսիդներ	0.051	1	0.051	10	1000	12.5	6 345
Մուր	0.005	1	0.005	10	1000	41.5	2 141
Ծծմբային անհիդրիդ	0.000002	1	0.000002	10	1000	16.5	0.396
Ընդամենը							10 290

Արտանետումներից շրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասը գնահատվում է ընդհանուր 35 615 ՀՀ դրամ:

10. ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՎԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

10.1. Բնապահպանական միջոցառումների նկարագիրը

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցությունը մոտակա բնակչության վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ)՝ նախատեսված սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Նախատեսվող աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանների կանխման կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

10.1.1. Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- գործունեության իրականացման շինհրապարակը ցանկապատել,
- աշխատանքների անցկացման վայրերը ծածկել համապատասխան ցանցերով,
- սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,
- պարբերաբար ստուգել տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,
- գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով,

- խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

Շինարարական գործողությունները կառաջացնեն անօրգանական փոշու արտանետումներ: Դիզելային վառելիքի այրմամբ պայմանավորված արտանետումները՝ ազոտի երկօքսիդ, ածխածնի օքսիդ, ծծմբային անհիդրիդ և մուր, առաջանում են միայն շինարարության ընթացքում՝ շինհրապարակի ներսում, տեխնիկական միջոցների աշխատանքի ընթացքում: Այս արտանետումները կրում են ժամանակավոր բնույթ: Քանի որ շինարարական թափոնների և հումք տեղափոխող մեքենաների համար կսահմանվի երթերի ժամանակացույց, շինհրապարակից դուրս, բնակելի տարածքներին մոտ արտանետումների գերազանցում չի լինի:

Հաշվի առնելով օգտագործվող դիզելային վառելիքի փոքր քանակները, մթնոլորտի գետնամերձ շերտում արագ ցրման հետևանքով արտանետումները չեն գերազանցի թույլատրելի նորմերը:

Արտանետումների քանակները կարող են նվազել պայմանավորված երթերի քանակով, ինչպես նաև մեքենաների արագությամբ /այդ ինտերվալը տատանվում է՝ մեքենայի 30կմ/ժ - 50կմ/ժ արագության սահմաններում՝ պայմանավորված մեքենաների շարժիչների տեխնիկական բնութագրից/:

Մթնոլորտային օդի պահպանությանն ուղղված բնապահպանական միջոցառումների համալիր ցանկը բերվում է ԲԿՊ-ի՝ «Մթնոլորտային օդի աղտոտում և կառավարում» ենթաբաժնում:

10.1.2. Զրային ռեսուրսներ

Զրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- բետոնի խառնուրդը գնել համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից,
- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- բացառել շինանյութերի և աղբի տարածումը տեղամասում:

10.1.3. Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- շինարարական նյութերի և քայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Ջերմուկի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- Հանվող հողային զանգվածը օգտագործել հետլիցքի և տարածքի բարեկարգման համար,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարել տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում:

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝

- շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
 - թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ Ջերմուկի համայնքապետարանի կողմից ընտրված կազմակերպության հետ, նախապես կնքված պայմանագրերի հիման վրա, որը կկնքվի դրական փորձաքննական եզրակացությունստանալուց հետո,
 - վտանգավոր թափոնների հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման կամ տեղակայման արտոնագիր,
 - շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից,
- Շինարարությունից ազատ մնացած տարածքների բարեկարգման նպատակով նախատեսվում է օգտագործել աշխատանքների ընթացքում հանված բնահողերը:

10.1.4. Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը գործունեության հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը՝ հաշվի առնելով առկա ազդակիր շինությունների հեռավորությունը շինտարածքից (մոտ 30-50մ): Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ, իսկ շինարարության

ընթացքում աղմուկի մակարդակը նվազեցնելու համար որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները և բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,
- խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում:

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի մակարդակի գերազանցումներ ՀՀ-ում սահմանված նորմերից չի կանխատեսվում, քանի որ շինարարական աշխատանքներում օգտագործվող մեքենա-սարքավորումները կշահագործվեն բացառապես աղմկակլանիչների և խլացուցիչների առկայության դեպքում: Բացի այդ հիմնական աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն միայն օրվա ցերեկային ժամերին, այն է՝ ժամը 9:00-ից 18:00:

Շինարարական աշխատանքների ընթացքում շինարար կապալառուներն պարատավոր է հետևել ՀՀ թրթռումների գործող նորմերին, քանի որ ծրագրի շրջանակում հարակից կառույցների վրա հասցված ցանկացած ֆիզիկական վնասը կվերացվի շինարար կապալառուի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:

Աղմուկի մակարդակի կառավարմանն ուղղված մեղմացնող միջոցառումներն առավել մանրամասն ներկայացված են *ԲԿՊ-ում* (Աղմուկի և թրթռումների մակարդակների կառավարում):

10.1.5. Կենսաբազմազանություն

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Ջերմուկ քաղաքի բնակեցված և կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում:

10.1.6. Սոցիալական ազդեցության մեղմում

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա հանրային միջավայրի վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և

ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանների կանխման կամ մեղմացման միջոցառումներն ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

Սոցիալական միջոցառումներ

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս,
- վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ:

Շինարարների համար առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպում և իրականացում:

Գործունեության ընթացքում հնարավոր սոցիալական ազդեցությունները մեղմացնելու նպատակով աղմուկ առաջացնող գործողությունները կիրականացվեն սահմանափակ ժամերի՝ 9:00-ից 18:00:

Կվերահսկվեն շինարարական մեքենաների տեխնիկական վիճակը, որպեսզի դրանք ապահովված լինեն աղմկակլանիչներով, ժամանակին կվերացվեն սարքավորումների անսարքությունները կամ անսարք վիճակում գտնվողները կփոխարինվեն նորերով:

Հնարավոր սոցիալական ազդեցությունները շին-հրապարակում կբացառվեն նաև աշխատանքի և առողջության անվտանգության ապահովման միջոցառումների իրականացմամբ, որոնք մանրամասն նկարագրված են ԲԿՊ-ի Աշխատանքի և առողջության ապահովման պլանում, մասնավորապես՝ կիրականցվի հրապարակի ցանկապատում, կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում, հրապարակում աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովվեն խմելու ջրի և հանգստի կազմակերպան պայմանները:

10.1.8. Հնարավոր արտակարգ իրավիճակները և մեղմացման միջոցառումները

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են հետևյալ ռիսկերը.

- հրդեհի առաջացում
- հեղուկ նյութերի արտահոսք
- աշխատողների վնասվածքներ
- շահագործվող տեխնիկայի հետ վթարներ:

Հնարավոր արտակարգ իրավիճակներից խուսափելու նպատակով պարբերաբար շինարարական տեղամասում կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

- մինչ աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները՝ այդ թվում նաև վարորդները, հրահանգավորվելու են ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, ինչը պատշաճ եղանակով գրանցվելու է անվտանգության վարման գրանցամատյանում:

- Բանվորական և ղեկավար կազմը ապահովվելու է սեզոնային արտահագուստով, անվտանգության սաղավարտով և այլ պաշտպանիչ միջոցներով:

- Հեղուկ նյութերը և քսայուղերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Շինարարական մեքենաների վառելիքի լիցքավորումը և քսայուղերի հետ առնչվող բոլոր գործողությունները կիրականացվեն հատուկ մասնագիտացված կենտրոններում:

- Հնարավոր վնասվածքների, պատահարների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի համայնքի բժշկական հաստատությունը:

- Շինարարական հարթակում կապահովվի արտակարգ իրավիճակների վարման մատյան, որը շինարար կապալառուին պարտավոր կլինի պատշաճ մակարդակով վարել:

- Շինարարական հրապարակում կապահովվեն արտակարգ իրավիճակների մասին պատմող և արձագանքման քայլերը լուսաբանող պաստառներ/պլակատներ:

Մասնավորապես՝ հակահրդեհային միջոցառումների նպատակով անհրաժեշտ է՝

- Շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվեն հրդեհաշիջման առաջնային միջոցներով, առաջին բուժօգնության դեղատուփով, իսկ աշխատողներն անցնելու են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում/պատրաստվածություն:

- Շինարարական գտնվող էլեկտրական ենթակայանը, ավտոտրանսպորտային միջոցների և տեխնիկայի կայանման վայրերը պետք է համալրված լինի հակահրդեհային սարքավորումներով, միջոցներով:

- Շինհրապարակում նախատեսել հրշեջ հիդրանտի տեղադրում, հրդեհաշիջման համար ապահովել ջրաղբյուրների ճանապարհների և անցումների ազատ ելքերը,
- Տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ և այլն,
- Մշտապես իրականացնել արտադրական հրապարակի, աշխատանքային հրապարակների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից,
- Նշանակել պատասխանատու, որի պարտավորությունների մեջ կմտնի հակահրդեհային միջոցառումների կիրառումը:
- Մշակել «Արտակարգ իրավիճակների ռիսկը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու գործողությունների ծրագիր», որն իր մեջ կներառի անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ իրականացվող միջոցառումները և հրդեհային անվտանգությունը:

Նշված միջոցառումների պատշաճ մակարդակով ապահովվման դեպքում, հնարավոր կլինի նվազագույնի հասցնել արտակարգ իրավիճակների ռիսկերը, իսկ առաջացման դեպքում հնարավոր կլինի ձեռնարկել արագ և արդյունավետ հակազդման միջոցառումներ:

10.1.9. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

Միջոցառումներից կարևորվում են հետևյալները.

- Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ:
- Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ):
- Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
- Կիրականացվի հրապարակի ցանկապատում, կողմնակի անձանց մուտքը արգելող նշանների տեղադրում:

- Հրապարակում աշխատող բանվորական կազմին կտրամադրվեն անվտանգության միջոցներ, կապահովվեն խմելու ջրի, կենցաղային կեղտաջրերի հեռացման և հանգստի կազմակերպան պայմանները և այլն:

Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է նախատեսել՝

ա) մշտապես իրականացնել շինարարական իրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

Հաշվի առնելով, որ աշխատանքների իրականացման հարևանությամբ բանվորների/աշխատակիցների կենցաղային կարիքների համար շարժական տնակ տեղադրելը նպատակահարմար չէ՝ տարածքի սահմանափակ լինելու պատճառով, ուստի բանվորների կենցաղային կարիքների համար նախատեսվում է իրականացվող աշխատանքների հարևանությամբ վարձակալել շինություն՝ բոլոր կոմունալ հարմարություններով, որը կձառայի նրանց սնվելու և հանգստի համար:

10.1.10. Փոխհատուցում

Ինչպես նկարագրվել է նախորդ բաժիններում ներկայավող գործունեությունը ամբողջությամբ նպատակաուղված է մշակութային օբյեկտի պահպանմանը:

11. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների

նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիթորինգի գործողություններ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում բնապահպանության մասնագետի կողմից կիրականացվեն մոնիթորինգի ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիթորինգի ստուգաթերթիկում:

Տեխնիկական վերահսկողը պետք է իրականացնի ամենօրյա հսկողություն, որը ներառելու է նաև բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության հարցերը: Տեխնիկական վերահսկողը պարտավոր է ժամանակին տեղեկացնելու կապալառուին նկատված անհամապատասխանությունների վերաբերյալ:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է հիմնական կապալառուի հետ մրցութային և պայմանագրային փաստաթղթերին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ծրագրի գործողությունները	Հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխանատուն	Մոնիթորինգի պատասխանատուն
Նախագծային աշխատանքներ	Բացասական ազդեցություններ՝ շինարարության և շահագործման փուլերում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում,	<p>Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև մրցութային և պայմանագրային փաստաթղթերում:</p> <ul style="list-style-type: none"> - Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռքբերում: - Տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների անջատման կամ տեղափոխման վերաբերյալ թույլտվության ձեռքբերում, սեփականատիրոջ հետ համաձայնեցում: 	Կապալառու	Տեխնիկական վերահսկողը
Շինանձնակազմի և շրջակա բնակչության անվտանգություն	ԲԿՊ-ի բնապահպանական պահանջների լիարժեք նախատեսումը և դրանց մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել	<ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: - Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ: - Աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը 	Կապալառու	Տեխնիկական վերահսկողը

	<p>շրջակա միջավայրի վատթարացման:</p>	<p>շրջակա տարածքների վրա:</p> <ul style="list-style-type: none"> - Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ): - Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ: 		
<p>Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ այլ շինարարական աշխատանքներ</p>	<p>Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ</p>	<ul style="list-style-type: none"> - Օդի աղտոտման և փոշու կառավարում Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում: - Անհրաժեշտ է իրականացնել շինհրապարակի պարբերական ջրցանում՝ փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով: - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար; - Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով: - Աշխատանքների ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ, որոնք կտեղափոխվեն նախատեսված վայր և չեն առաջացնի կուտակումներ: - Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) 	<p>Կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկողը</p>

		<p>պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով:</p> <ul style="list-style-type: none"> - Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի: - Պատահական գտածո հայտնաբերելու դեպքում դադարեցնել աշխատանքները և գործել ըստ հրահանգի 		
<p>Թափոնների կառավարում</p>	<p>Շինաղբի տեղադրում անհամապատասխան վայրերում:</p>	<ul style="list-style-type: none"> - Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Քանդման և շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք է տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից : - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն: - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել: - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով 	<p>Կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկողը</p>

		<p>վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը</p> <ul style="list-style-type: none"> - Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: 		
Աղմուկի և թրթռումների կառավարում	Շինաշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:	<ul style="list-style-type: none"> - Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներին, չափագրումներ կիրականացվեն ազդակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը: - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը: 	Կապալառու	Տեխնիկական վերահսկողը
Շինհրապարակի վերականգնում		<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն: - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները: - Մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը: - Մշակված ընդունման-հանձնման ակտի 	Կապալառու Կապալառու	Տեխնիկական վերահսկողը

		ստուգաթերթիկի բոլոր պահանջները: - Կատարել կանաչապատման/բարեկարգման աշխատանքներ: - :		
--	--	---	--	--

Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է ծրագրի արժեքի 1 - 2%

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	(ո՞վ է իրականացնում մոնիթորինգը)
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակարարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Ջերմուկի համայնքապետարան
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում 	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակ մասնագիտացված կայաններ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ 	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Ջերմուկի համայնքապետարան
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	<ul style="list-style-type: none"> - Մեքենաների և տեխնիկայի վրացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս՝ մոտակա գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի վիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում 	Մասնագիտացված սպասարկման կայաններ և վիցքավորման կետեր	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Վերահսկող խորհրդատու
Գոյություն ունեցող	<ul style="list-style-type: none"> - Քանդման ընթացքում ջրցան - Քանդման մնացորդների պահեստավո- 	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության	Քանդման ընթացքում	Վերահսկող խորհրդատու

հենապատերի քանդում	րում հատուկ հատկացված տեղամասում և աշխատանքների ավարտից հետո ընդհանուր շինադրի հետ տեղափոխում քաղաքապետարանի կողմից հատկացված վայր		ստուգում		
Հողային աշխատանքներ	- Հանված հողային գրունտները պահեստավորում են թույլատրված վայրում - Անհրաժեշտության դեպքում ետլիցք, ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով - հողային զանգվածների և շինհրապարակի ջրցան	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Վերահսկող խորհրդատու
Կենցաղային աղբի Առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - Ջերմուկի համայնքապետարանի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Վերահսկող խորհրդատու
Շինարարական հրապարակի բարեկարգում	Շինարարական հրապարակի ժամանակավոր պահեստի /բետոնախառնիչի/ ապամոնտաժում, և տեղանքի բարեկարգում - Շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում և վերականգնում	Շինարարական հրապարակ, ժամանակավոր պահեստներ	Ստուգման գործընթացներ	Շինարարության ավարտական փուլ	Վերահսկող խորհրդատու
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Վերահսկող խորհրդատու

	պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն				
Շինհրապարակի վերականգնում, կանաչապատում և տարածքի բարեկարգում	<ul style="list-style-type: none"> - Շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված է 	Տեղամասեր կատարած ստուգայցեր	Շինհրապարակի զննում	Շինարարության ավարտին	Վերահսկող խորհրդատու

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ԱԶԲ 2015, Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ
2. ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ
3. ՀՀ կառավարության որոշում N91-Ն «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը»՝ հաստատված 21.01.2005թ.
4. ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական Կլիմայաբանություն» շինարարական նորմեր ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024թ. հունվարի 15-ի N03-Ն հրաման:
5. ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.
6. ՀՀ կառավարության N 862-Ա որոշում: Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին: 25 օգոստոս 2016, URL: <https://www.e-gov.am/gov-decrees/item/27593/>
7. ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին
8. <https://www.arlis.am/>
9. <http://www.atdf.am/>
10. Методика расчета выбросов загрязняющих веществ в атмосферу от предприятий по производству строительных материалов, Казахстан 2008
11. «Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակների որոշման» մեթոդական հրահանգ
12. ՀՀ Կառավարության որոշում, 25 հունվարի 2005թ. N92-Ն «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ»

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Նախագծման թույլտվություն

Ձև N 2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Վայոց ձորի մարզ
Ջերմուկ համայնք
ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

N 9 31 . 10 . 2023թ.

Օբյեկտ՝ Ջերմուկ համայնք, Ջերմուկ քաղաքի Ըմպեյասրահի վերակառուցում ուժեղացումով նախատեսված աշխատանքների (Ըմպեյասրահի կառուցի վերակառուցում ուժեղացումով և բարեկարգում, օրամատակարարման և օրահեռացման և կոյուղու համակարգերի վերականգնում, կառուցի արտաքին լուսավորության համակարգի ստեղծումը ըմպեյասրահի հարթակի վերականգնում, սանիտարական հանգույցի վերակառուցում, ըմպեյասրահի հարակից հարթակի և երիզող հենապատերի վերակառուցման և ամրացման աշխատանքներ) (III կատեգորիա)

(կառուցում, վերակառուցում, ուժեղացում, կապիտալ նորոգում, ամրակայում, վերականգնում, և այլն, օբյեկտի անվանումը, հակիրճ ընդդրումը, հզորությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան)

նախագծային փաստաթղթերի մշակման համար

(նախագծման փուլերը)

Հասցեն՝ Վայոց Ձորի մարզ, Ջերմուկ համայնք, ք" Ջերմուկ ըմպեյասրահ

Կառուցապարտող՝ ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամ (ՀՏԶՀ), Երևան, Ուլնեցու 31
(կազմակերպության անվանումը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը՝

Համայնքի ղեկավարի որոշում

(կառուցապատման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման, քաղաքաշինական այլ գործունեության հետ առնչվող անհրաժեշտ փաստաթղթերը)

Առաջադրանքի գործողության ժամկետը

18 ամիս

(N1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲԵՌՈՒԹՎԳԻՐԸ

1. Հողամասը գտնվում է

Բնակավայրերի նպատակային նշանակության և հասարակական գործառնական նշանակության գոտիներում

(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)

2. Հողամասի չափերը

398.2 քմ շինոթյուն

(հողամասի սահմանները՝ կողողինատային նշահարմամբ, մակերեսը (հա))

3. Հողամասի առկա վիճակը

4. Տրանսպորտային պայմանները

5. Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

6. Կից հողամասեր

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական զոտիներ)

8. Հատակագծային սահմանափակումներ

Ընպեյարահ

(ոնիճի բնութագրող, շենքերի (այդ թվում՝ քանդան ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական կտրերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

Մյասնիկյան փողոց

Առկա է՝ էլ. հոսանք, կոյուղի, ջուր

(նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

համայնքային հողեր

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

Ընպեյարահ

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

Ըստ նախագծի

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ Ընպեյարահի կառույցի վերակառուցում՝ ուժեղացումով և բարեկարգում, Զրամատակարարման և ջրահեռացման և կոյուղու համակարգերի վերականգնում

(նյութով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

9.2. հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

չկա

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

չկա

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը

հողմասի մակերեսին՝ տոկոսներով (%)

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողմասի մակերեսին՝ տոկոսներով (%))

չկա

9.7. այլ պահանջներ

10. Հողմասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման պայմանները և աշխատանքների հերթականությունը

չորակա միջավայրը (տանգալիտ ազդեցությունից բացառելու միջոցառումները)

11. Ատորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

չկա

12. Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում

ըստ նախագծի և տեխ. պայմանի

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. էլեկտրամատակարարում

«Հարավային էլ. Ցանց» ՋԶԻՊ-ով

մասնաճյուղ

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. գազամատակարարում

չկա

(համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադրիչը

(համաձայն կարգի 4.7-րդ կետով սահմանված ելակետային սովորելիքի)

12.5. թույլ իոսանքներ

12.6. աղբահանություն

ՋԶԻՊ-ով համայնքապետարան

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում

(ունգիլի կազմակերպման, ցրահնուցման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)

14. Բարեկարգում

Ըստ բարեկարգման նախագծի

(անդամության պահպանման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գոլազր և այլն)

15. Շինարարական նյութեր

Թիթեղ, քաղալո, ամրան լուսատուներ

(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)

16. Պաշտպանական կառույցներ

կլա

(արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ

ըստ հակահրդեհային նորմերի

(հակահրդեհային անվտանգության ապահովման)

18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

ապահովել հասանելիությունը դեպի
ըմպելասարահ

19. Շրջակա միջավայրի պահպանում

Շին. աղբի տեղափոխում «Ձիրակ»
աղբավայր

20. Շինարարության կազմակերպում

ժամանակացույցով

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տեսեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը

18 ամիս

(նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը՝ ՀՀ կառավարության 1998 թ. դեկտեմբերի 12-ի N 812 որոշման N 1 հավելվածի 6-րդ կետին համապատասխան)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

փորձաքննություն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

(իրավաստի մարմնի հետ կամ քաղաքաշինական խորհրդում նախագծային նյութերի նախնական համաձայնեցում)

24. Հասարակական քննարկումներ

օրենսդրությամբ հաստատված կարգով
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

Համաձայնեցումներ

(Նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրինակով սահմանված պահանջները՝ իրադրձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև կարգի 4.8-րդ կետով սահմանված դեպքերում՝ խմբներական ենթակառուցվածքի սեփականատերերից (օգտատիրոջի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

27. Այլ պայմաններ

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝


Վ. ԱՐՄԵՆՅԱՆ
(անունը, ազգանունը)

Կ. Տ.



